



Խմբագրական

ՆՈՐ ՀԱՐԻՒՐԱՄԵԱԿԻ ՄԵՄԻՆ....



Ամբողջ 2015-ը Հայկական Ցեղասպանութեան հարիւրամեայ տարելիցն էր, անոր ոգեկոչումը, անոր նուիրումը հանդիսութիւնները, գիտաժողովները, ցուցահանդէսները, բազում եւ բազմաբնոյթ ձեռնարկները, որոնք կատարուեցան գաղութ-գաղութ, Մայր հայրենիքէն մինչեւ աշխարհի չորս ծագերը, ուր կայ թէկուզ բուռ մը հայ որ կ'ապրի իր հայկականութեամբ բաբախուն..., եւ այս բոլորը՝ համահայկական ոգիով, համահայկական գիտակցութեամբ, արժանապատուութեամբ, համահայկական պահանջատիրական յանձնառութեամբ, իրաւապահանջութեամբ, մէկ սիրտ, մէկ հոգի, բառիս իսկական առումով...: Տպաւորիչ քայլեր էին յատկապէս մեր բիրաւոր նահատակներու սրբադասումը, Հռոմի Պապի Հայոց Ցեղասպանութեան եւ արդարութեան վերականգնումի մասին բարձրաձայնումը Վատիկանի մէջ ի լուր համայն աշխարհի...: Նմանապէս՝ ՀՀ նախագահի Համահայկական Հռչակագրի յայտարարութիւնը հայ իարաւապահանջութեան վերաբերեալ, Ծիծեռնակաբերդի յուշահամալիրին մէջ, ինչպէս նաեւ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան բացած իրաւապահանջ դատը՝ Սիսի Կաթողիկոսութեան բռնախլուած իրաւունքներուն վերականգնումի գծով:

Կրնա՞նք ըսել, սակայն, որ ամէն ինչ հասաւ իր աւարտին եւ կրնանք հանգիստ քուն քնանալ մինչեւ յաջորդ Հարիւրամեակ, թէ՞ տակաւին, սա նոր մեկնակէտ է նոր Հարիւրամեակին ընդ առաջ, նոր բովանդակութիւն տալու մասնաւորաբար Հարիւրամեակի՝ «Կը յիշեմ եւ կը պահանջեմ» կարգախօսին: Յիշողութիւնը էական բայց բաւարար չէ հարկաւ պահանջատիրութեան երկարամեայ, ծրագրաւորուած եւ հետեւողական աշխատանքին համար, հայ Դատի հետապնդումին համար, որուն համար հրամայական նախապայման է Համահայրութեան ճիշդ վերակազմակերպումը՝ իր երեք ջոկատներով՝ Հայաստան, Արցախ, Սփիւռք: Հայաստանի Հանրապետութիւնը վատահարք ունի իր պետական անվտանգութեան թելադրած մտահոգութիւնները, ինչ կը վերաբերի Թուրքիայէն հող պահանջելու խնդրին, թէեւ Ուիլսոնեան իրաւարարութեան սահմանագծումը Հայաստանի հողատարածքին կը մնայ ի գորու ներկայիս եւս: Իսկ տարագիր Սփիւռքը՝ Կրցա՞ւ ան վերակազմակերպուի՞ Մէկ Ներկայացուցչական Լիազօր Մարմնի մը ներքոյ, վեր ելլելով կուսակցական, հատուածական եւ այլ նկատառումներէ, ա՛լ քարացած կարծրատիպերէ, հնամաշ դարձած գործելաոճերէ: Վերջապէս, ո՞վ է բուն իրաւատէրը հայ Դատին: Իր հողերէն բռնի տեղահանուած եւ աշխարհի չորս ծագերուն սփռուած տարագիր եւ հայրենագուրկ հայութիւնը չէ՞ բուն իրաւատէրը հայ Դատին, որ ցարդ կը մնայ առանց զինք լիիրաւ եւ լիարժէք ներկայացնող Մէկ, Կեդրոնական, Ներկայացուցչական Մարմնի:

Մեր առաջին քայլը պիտի ըլլայ առաջնահերթաբար կեանքի կոչել վերոնշեալ Մարմինը՝ իր բոլոր ածանցեալ կառոյցներով, որոնցմէ են մասնաւորաբար Համասփիւռքեան



Հիմնադրամը եւ Մտածողներու Մարմինը (think tank), ինչպէս կը գրէ այնքան յատկանշականօրէն Դոկտ. Փրոֆ. Երուանդ Քասունի իր՝ «Սփիւռք-Համասփիւռքեան Հիմնադրամ» խորագրեալ յօդուածին մէջ (տես մեր նախորդ թիւը):

Մեր առջեւ կայ քայլ առ քայլ մշակելի եւ գործադրելի Ծրագիր՝ հայ Դատի հետապնդման գծով, եթէ չենք ուզեր մենք մեզ խաբել՝ զգացական զեղումներով եւ ձեւական ու ցուցադրական միջոցառումներով միայն: Եթէ չենք ուզեր մանաւանդ ապաւինիլ օտարին ողորմածութեան:

Զօրաւոր Հայաստանի Հանրապետութիւնը եւ զօրաւոր Սփիւռքը էական բաղադրիչներն են, անկասկած, հայ Դատի բարօք լուծման ուղղութեամբ: Այստեղ չենք նշեր Արցախը՝ առանձինն, քանզի անիկա անքակտելի եւ անբաժանելի մասն է Հայաստանի Հանրապետութեան:

Զօրաւոր Հայաստանի Հանրապետութիւն կը նշանակէ առաջնահերթաբար՝ արդարութեան եւ ազգային-հոգեւոր արժեհամակարգի վրայ կառուցուած, ազգային-պետական յստակ օրակարգով եւ տեսլականով առաջնորդուող պետութիւն իր բոլոր ստորոգելիներով՝ ազգային բանակ, արդիւնաբերութիւն, տնտեսութիւն, գիտութիւն, մշակոյթ, կրթութիւն, առողջապահութիւն..., որոնք գործեն պետական մտածողութեամբ, հաւաքական շահը ունենալով որպէս զերնպատակ եւ ոչ՝ անձնականը, խմբակայինը, հատուածականը...: Կը նշանակէ՝ ազնիւ ըլլալ մէկգմէկու նկատմամբ, չկաշառել եւ չկաշառուիլ, չխաբել, չկեղեքել, չչարաշահել, սիրել զիրար, վստահիլ իրարու...եւ արթուն պահել ոգին, արժանապատուութիւնը, ազգային-հայրենասիրական ոգին, առանց որուն «մենք կը քաղցենք ճոխ սեղանի մօտ», քանզի ոգին է ամէն յաղթանակի սկիզբը, ամէն յաղթանակի արժեւորման բանալին, ամէն յառաջդիմութեան խթանիչ ուժը...: Յայնժամ միայն կը կասի մեր երկիրը հայաթափող արտագաղթը, կը կայանայ ազգային մեր պետականութիւնը, կը կայանայ քաղաքացիական հասարակութիւնը, ուր ամէն ոք ինքզինք զգայ տէրն ու ծառան մեր երկրին, պատրաստ նուիրաբերելու իր ամբողջական ներուժը մեր երկրի զարգացման, յարատեւման: Իսկ ժողովուրդի մը հունաւորուած, արդիւնաւորուած ներուժը մեծագոյն եւ անփոխարինելի հարստութիւն է որոշապէս: Մեր երկրին զերագոյն ուժը:

Զօրաւոր Սփիւռք կը նշանակէ վերակազմակերպուած սփիւռք՝ իր ներկայացուցչական, համասփիւռքեան Մարմինով գլխաւորաբար եւ անոր հետ ածանցեալ՝ Համասփիւռքեան Հիմնադրամով, մտածողներու եւ մասնագէտներու խորհուրդով, հայ դպրոցներու ցանցով, ընկերային-առողջապահական ծառայութիւններով, քարոզչական մեքենայով...: Եթէ կարենանք դուրս գալ կոշկոռ կապած, մեր հնամաշ մտածելակերպէն եւ գործելակերպէն, թօթափել մեր վրայէն հնաճ եւ քարացած գործելաեղանակներու արգելակները, յայնժամ միայն կարելի է յուսալ որ իրերայաջորդ սերունդները պիտի կարենան հայօրէն դաստիարակուիլ եւ ստանձնել հայ Դատ հետապնդելու ծանր եւ լրջագոյն պատասխանատուութիւնը: Առանց նման վերակազմակերպումի, անտէր ու անտիրական սփիւռքը՝ ժամանակի թաւալումով, մէկ առ մէկ պիտի փակէ հայ դպրոց ու մամուլ, հայեցի կրթութեան օճախ ու մշակոյթի տուն, պիտի բռնէ ազգային նահանջի տխուր ճամբան, եւ հարիւրամեակ մը ետք կամ անկէ շատ առաջ ալ, գուցէ մնան ծագումով հայեր միայն, որ



գուրկ ըլլան հայոց լեզուի եւ հայ մշակոյթի կենարար աւիշէն...որ էապէս կը սննդաւորէ հայն ու հայութիւնը՝ իր հայկականութեամբ, ազգային իր էութեամբ: Հետեւաբար, հայ Դատ եւ պահանջատիրութիւն կրնան դառնալ բովանդակագուրկ բառ-հասկացութիւններ, քանզի առանց հայօրէն պատրաստուած սերունդներու, Իրաւունքը կը մնայ առանց Իրաւատէրի կը դառնայ լքեալ տարր...ի վերջոյ հանգչելու պատմութեան արխիւներուն մէջ: Ունի՞նք կամքն ու յանձնառութիւնը կեանքի կոչելու նման մարմին ու ածանցեալ կառոյցներ, թէ՞ պիտի շարունակենք մեր կուսակցակէդրոն մտածելակերպը, հայ կեանքի մայր երակէն դուրս ձգելով անկուսակցական մտածողն ու մասնագետը, նուիրեալն ու շարքային հայր...: Պիտի հաւաքագրէ՞նք մեր ներուժը, պիտի խտացնէ՞նք տարտղնուած մեր ուժերը նման կէդրոնական լիիրաւ մարմնի մը ներքոյ եւ բարձր պատասխանատուութեամբ ու յանձնառութեամբ նոր թափ ու սլացք տանք Պահանջատիրական եւ հայապահպանման մեր աշխատանքներուն: Սա վստահաբար նոր խթան կրնայ ըլլալ նաեւ՝ Հայաստան-Սփիւոք կապերու սերտացման եւ արդիւնաւորման, քանզի միայն վերակազմակերպուած սփիւոքը կրնայ երկարաժամկէտ, ծրագրաւորուած եւ արդիւնաբեր նեցուկ եւ զօրավիգ ըլլալ Հայաստանին: Սա գերագոյն մարտահրաւերներէն մէկն է նոր հարիւրամեակին ընդառաջ:

Այսօր Թուրքիան հետեւողականօրէն կը շարունակէ իր ցեղասպանութեան քաղաքականութիւնը, իր ձեռքին տակ ունենալով մահաբեր գործիք մը՝ ՏԱԷՇ կոչեցեալ, որ իր արիւնալի նախճիրները կը սարքէ աշխարհի չորս կողմերը, ահ ու սարսափ տարածելով չորս դին: Արմատական իսլամիստներու այս զինեալ խումբը որոշապէս իր հրահանգները կը ստանայ Թուրքիայէն, կը գործէ անոր հակակշռին տակ, իր վարժութիւնները կը կատարէ անոր հողին վրայ, որպէս անոր ռազմավարութեան գործադիր զինուժը...: ՏԱԷՇ-ը էապէս հակահայկական է: Վկայ՝ մէկ ու կէս տարի առաջ, անոր յարձակումը Քեսապի վրայ, տեղւոյն հայութեան բռնի տեղահանումը իր բնօրրանէն. Վկայ՝ Տէր Զօրի Նահատակաց յուշարձան-եկեղեցոյ քարուքանդ կործանումը իր ձեռամբ. Վկայ՝ Հալէպի պատմական Ս. Քառասուն Մանկանց եկեղեցոյ ոմբահարումը. Վկայ՝ Հալէպի հայկական թաղերու մահասփիւռ քանդումը...եւ այսպէս, շարունակաբար: Եւ ճիշդ ինչպէս հարիւր տարի առաջ, Եւրոպայի գերիզօր ուժերը, ԱՄՆ-ը տակաւին անաչառ գնահատականը չտուին այս ճիւղին ետին գտնուող Թուրքիոյ սերտ գործակցութեան: Աւելին, այս ոճրային կազմակերպութիւնը ծնունդն է արեւմտեան գերիզօր ուժերու...Պատմութիւնը կարծէք կը կրկնուի միեւնոյն ձեռագիրով եւ դաժանութեամբ:

Ներկայիս, առաւել քան երբէ՛ք, հայ քաղաքական միտքը հարկադրանքին տակն է համակարգելու իր ուժերը, միասնական ռազմավարական ծրագիր մշակելու յետին մանրամասնութեամբ, կարենալու համար դիմակայել մեր ազգային անվտանգութեան եւ հայ լինելութեան սպառնացող լրջագոյն վտանգները: Նմանապէս, կարենալու հայ Դատի հետապնդումը արդիւնաւետութեամբ հունաւորել գալիք տասնամեակներուն:

Ազգային ներուժը միաւորելու, հունաւորելու, համակարգելու եւ նպատակաւայաց գործելու հրամայականը կը ցցուի մեր դիմաց, որպէս ժողովուրդ եւ հայոց երկիր, ներկայիս առաւել քան երբէք...Պիտի կարենա՞նք՝ դարերու փորձով իմաստնացած, մեր սխալներէն դասեր քաղած եւ ապրելու, յարատեւելու վճռակամութեամբ եւ արժանապատուութեամբ



շարունակել մեր ճամբան եւ մեր արժանավայել տեղն ու դերը նուաճել, ամրագրել ներկայ բարդ աշխարհի խճանկարին մէջ...

ԵՐԱՆ ԳՈՒՅՈՒՄՃԵԱՆ

Կիպրահայ

ՎԵՐԱԳՏՆԵԼՈՎ ՆԱԽՆԵԱՑ ԱՐՄԱՏՆԵՐԸ...

Բռնագրաւուած Արեւմտեան Հայաստանը եւ հայկական Կիլիկիան...Հողը՝ որ պարունակն էր մեր բազմահազարամեայ պատմութեան, մշակոյթին, հոգեւոր-մշակութային



արժէքներուն, հայ կեանքին: Կը ճանչնա՞նք այդ Հողը, քար առ քար, կառոյց առ կառոյց, աւերակ առ աւերակ, նշխար առ նշխար...որպէսզի կարենանք խորզալ մեր կորուստը, հողին զարկերակը, նախնեաց կանչը, հաղորդուիլ մեր արմատներուն, որոնք դեռ կը տրոփեն այդ հողին տակ, կը բարախեն լուռ ու տխուր իւրաքանչիւր աւերակին, իւրաքանչիւր նախշազարդ քար ու խոյակին մէջ, կը հառաչեն կիսաւեր եւ կիսավիուլ տաճարէն, ամրոցէն, տուներէն...:

Ինքնաճանաչումը էական է հայեցի լինելութեան, հայ պահանջատիրութեան համար:

Պիտի վերագտնել նախնեաց արմատները:

Նուիրական այս զգացում-գիտակցութեան դրդումով էր, վստահաբար, որ Դալար Գույումճեան Թորոսեան, խումբ մը ուխտաւորներու հետ միասին, պիտի ուղեւորուէր Արեւմտեան Հայաստան եւ հայկական Կիլիկիա 2012-ին...

Արդիւնքը՝ Համազգայինի Կիպրոսի «Օշական» Մասնաճիւղին կազմակերպած 109 լուսանկարներու ցուցահանդէսն էր, որ տեղի ունեցաւ Նիկոսիոյ հին, պատմական թաղամասի «Խիլեմպորիկի Արէոս» հնաքոյր սրահին մէջ, հովանաւորութեամբ Պետ. Ներկ.



Տիար Վարդգէս Մահտեսեանի, ներկայութեամբ հիւրաբար Կիպրոս գտնուող Արցախի Հանրապետութեան փոխ-վարչապետ Տիար Արթուր Աղաբեկեանի, Թեմիս Կաթ. Փոխ. Գերապատիւ Տ. Նարեկ Արք. Ալեմեզեանի, Տէր Մովսիկ քինյ. Հապէշեանի եւ հոժ հանրութեան մը՝ Ուրբաթ 27 Նոյեմբեր 2015-ին, երեկոյեան ժամը 8-ին, պաշտօնական բացումովը՝



Նիկոսիոյ Վսեմաշուք Քաղաքապետ Տիար Կոնստանտինոս Եորկաճիսի:

«Օշական» Մասնաճիւղին կողմէ խօսք առաւ Տիար Արթօ Դաւիթեան, որ սեղմ տողերով բնութագրեց Համազգային Մշակութային Միութեան հայապահպան գործունէութիւնը՝ սփիւռքահայ կեանքէն ներս հայ մշակոյթի ոգին վառ պահելու գծով, յատկապէս նշելով. «Այս ցուցահանդէսը արդիւնքն է ուխտագնացութեան մը դէպի Արեւմտեան Հայաստան եւ Կիլիկիա, դիտուած Դալար Գույումճեան Թորոսեանի պրիսմակէն: Ան ճարտարապետ է ասպարեզով, որ կրցեր է որսալ եւ իրեն հետ բերել իր՝ յաւետ կորսուելու վտանգի եզրին կանգնած Ժառանգութեան, ճարտարապետական, մշակութային եւ բնանկարային գեղեցկութիւնը....Ուխտագնացութիւնը զայն ներշնչած է կատարելու լայն ուսումնասիրութիւն մը, կորսուած պատմութիւն մը վերագտնելու հետամուտ...»: Ան եզրակացուց. «Նշելով Հայկական Տեղասպանութեան 100-ամեակը, մեր փափաքն է որ բոլոր զաղթականները, ո՛ր որ ալ գտնուին անոնք աշխարհիս երեսին, հայերն ու կիպրացիները մասնաւորաբար, կարենան վերադառնալ իրենց պապենական հողերը եւ կարենան վայելել՝ իրենց հայրենիքին մէջ ապահով ապրելու ազատութիւնը»:

Խորապէս իմաստալից եւ հոգեյոյզ էր Դալար Գույումճեան Թորոսեանի խօսքը, ուր ան յատկապէս ըսաւ. «Երբ այնտեղ էի, առաջին անգամ ըլլալով զգացի թէ ի՞նչ կը նշանակէր իսկապէս գտնուիլ իմ նախնեաց հողերուն վրայ: Զգացի քալածս հողին թրթռացումները, կողոպտուած եւ լքուած եկեղեցիներու հոգեյոյզ ներքինը....Զգացի ինքնատիպ ոյժը նախահայրերուս, որ լաւագոյնս բնութագրուած է՝ Եղեռնի նահատակ բանաստեղծ Դանիէլ Վարուժանի....հետեւեալ տողերուն մէջ. « Այս հողին մէջ՝ Հիւլէ մը կայ Հայկէն, փոշի մ'Արամէն, Անանիայէն բիբ մը դէտ, դեռ աստղերու ճաճանչներով թաթաւուն: Ազգ մը կայ հոն...ազգ մը հին, որ այսօր իր վերաշողոշող այգուն մէջ, հողի բնատուր մարմնոյն տակ ինձ կը խօսի...»: Չորսամեայ որդիս նոյնպէս զգածուած էր այս վայրերէն, երբ Անիի աւերակուած եւ ամայացած Անիի մէջ, ան ըսաւ. «Երբ մեծնամ, այս քաղաքին եւ անոր եկեղեցիներուն պահակը պիտի ըլլամ»:




Ան շարունակեց ըսելով. « Կը հաւատամ որ բոլորս պէտք է աշխատինք հանգամանքներու փոփոխութեան ուղղութեամբ, որպէսզի վերադառնանք մեր տուններն ու գիւղերը, եւ խաղաղութեամբ ապրինք, առանց որեւէ հալածանքի: Մինչ այդ, ամէն հայ պէտք է այցելէ այս հողերը, զգայ եւ պահանջէ անոնց տիրութիւնը, քանի որ անոնք մերն են, աներկբայօրէն: Միայն այնտեղ է, որ կարելի է լիաթոք շնչել Հայկի շունչը եւ ճաշակել պտուղները այն հողին որ կը կրէ փառքը մեր հին հերոսներուն: Միայն այնտեղ է որ հայու հոգին պիտի սկսի թրթռալ հարազատօրէն....: Այս լուսանկարներովս, փորձած եմ ձեզի վերադարձնել այն բոլորը, որոնց մասին կարդացեր ենք միայն մեր պատմութեան գիրքերուն մէջ....ա՛յն որ բացայայտօրէն Հայկական է, ա՛յն որ կը պատկանի քեզի, ինձի, բոլորիս, քանի որ մենք զաւակներն ենք անոնց, որոնք բռնի ուժով դուրս դրուեցան անկէ: 100 տարի ետք, եկեղեցիները, վանքերն ու տուները կը մնան պարապ, բայց դեռ կը շողարձակեն անոնք այն ներուժը, այն կարօտը դէպի իրենց իրաւատէրերը, որ վերադառնան եւ վերականգնեն զանոնք իրենց երբեմնի նախնական փառքով...»:



Այնուհետեւ, գնահատական քանի մը ջերմ խօսքերէ ետք, Տիար Կոնստանտինոս Եորկաճիս պաշտօնական բացումը կատարեց ցուցահանդէսին:

109 լուսանկարներ՝ Արեւմտեան Հայաստանի եւ Կիլիկիոյ գիւղերէն ու քաղաքներէն, վանքերէն ու եկեղեցիներէն, բերդերէն ու տուններէն, պարիսպներէն ու կամուրջներէն, նախշագարդ քարերէն եւ որմերէն....որոնք կը տողանցեն հայեացքիդ դիմաց, քեզ փոխադրելով նախահայրերուդ արմատները, քու արմատներդ, սեփական հոգիդ, հարազատ ինքնութիւնդ, ազգային էութիւնդ....

Պարզ լուսանկարներ չեն ասոնք, այլ կորուստի ցաւով ու կսկիծով, խոր կարօտով, այլեւ



հպարտութեամբ լուսանկարուած եւ հայ հոգիի կնիքը կրող հոգեպատկերներ, որոնք մերթ կը յուզեն, մերթ կը ոգեշնչեն, մերթ կ'առինքնեն....ինքնաճանաչման կայծով կը բռնկեն հոգիդ, պահանջատիրութեան կամքով կը գօտեպնդեն քեզ:

Վարձքդ կատա՛ր, սիրելի Դալար, որ՝ որպէս տատրակ մը տարագիր, բռնագրաւուած հայրենի տան սերն ու կարօտը արծարծեցիր մեր սրտերուն մէջ,



քիչ մը Հայաստան բերիք մեզի, հայրենագուրկ մեր առօրեան ջերմացնելու լուսանկարներէդ ճառագայթող հայրենասիրութեան շողով եւ նոր լիցք տալու մեր պահանջատիրական պայքարին...:

ԵՐԱՆ ԳՈՒՅՈՒՄՃԵԱՆ

Գրական-Մշակութային

ՄԵՐԳԷՅ ՄԱՆՈՒԷԼԵԱՆԻ «ԼՈՒՍԻՆԷ ԶԱՔԱՐԵԱՆԸ Ժամանակակիցների Յուշերում» Գիրքին լոյս ընծայման առթիւ

Շուրջ երեք տարի առաջ, ընկերային ցանցի վրայ, հայրենի արեւելագետ եւ դիմատետրի



կրտսեր բարեկամս, Մերգէյ Մանուէլեան, ինձմէ կը խնդրէր իմ յուշերս կամ տպաւորութիւններս պատմել, անշուշտ եթէ ունիմ, հոչակաւոր երգչուհի Լուսինէ Զաքարեանի մասին, նշելով որ ինք կը նպատակադրէր գիրք մը հրատարակել Լուսինէի մասին, գիրքի էջերուն մէջ ընդգրկելով հոգելոյս երգչուհիին ժամանակակիցներու յուշերը, պատմութիւնները, գնահատանքի խօսքերը....: Առանց երկար-բարակ մտածելու, ես անմիջականօրէն գրի առի ա՛յն ինչ որ կար յիշողութեանս ծալքերուն մէջ եւ յղեցի իրեն: Եւ ահա երեք տարի անց, հայրենի երիտասարդ բարեկամիս նախաձեռնութեան եւ ժրաջան աշխատանքի արդիւնքը՝ «Լուսինէ Զաքարեանը Ժամանակակիցներու Յուշերում» գեղատիպ հատորը, որմէ օրինակ մը ան ազնուաբար ինձի կ'ուղարկէր:

Մեծ հետաքրքրութեամբ կարդացի այս հոյակապ գիրքը, առանց զայն ձեռքէս բաց թողելու, սկիզբէն մինչեւ վերջ: Բարձրորակ տպագրութեամբ, ճաշակաւոր ձեւաւորումով, շուրջ 100 լուսանկարներ եւ 78 առանձին յուշագրութիւններ պարփակող այս հատորը իրաւամբ կու գայ լրացնելու անգուգական երգչուհի Լուսինէ Զաքարեանի անհատական դիմանկարը եւ ստեղծագործական կեանքի ընդհանուր պատկերը:

Լուսինէ Զաքարեան....Անուն՝ որ դարձաւ առասպել իր կենդանութեան իսկ օրօք, երբ բարձրարուեստ, վերերկրային, աստուածային երգեցողութեամբ հնչեցուցուց ան հայ հոգեւոր երաժշտութեան գոհարները՝ Մայր հայրենիքի եւ սփիւռքի բեմերուն վրայ, հայ թէ օտար երդիքներու տակ, աշխարհով մէկ եւ մասնաւորաբար Ս. Էջմիածնի Մայր տաճարի խնկաբոյր կամարներուն տակ, նուաճելով բոլորին սրտերը, դառնալով երեւոյթ, հոգեւոր առաքելութիւն, հաւատք, յոյս, սէր, ոգեղէնութիւն, լոյս....: Այս բոլորին հետ միաձոյլ էին իր սրբակենցաղ վարքն ու բարքը, իր բարոյական առաքինութիւնները՝ անմեղութիւնն ու



մանկական միամտութիւնը, համեստութիւնն ու հեզութիւնը, ազնուութիւնն ու ազնուականութիւնը, նրբանուրբ հոգին, նիւթն ու նիւթականէն հեռու հոգեղէնութիւնը, հրեշտակային կերպարը, որուն հետ հաղորդակից դարձայ անձամբ ալ, երբ Լուսինէ Ջաքարեան Կիպրոս այցելեց 1987-ին, հոգեպարար համերգ մը պարգեւելու կիպրահայութեան եւ Մելգոնեան Կրթական Հաստատութեան մեծ ընտանիքին՝ անոր պատմական բեմին վրայ....

Գիրքին էջերէն կը տողանցեն արուեստագէտներ, մշակոյթի գործիչներ, մտաւորականներ, հրապարակախօսներ, որոնց յուշերը, պատումները, գնահատական խօսքերը, զի՞ծ առ զի՞ծ եւ երանգ առ երանգ կը կազմեն հրեշտակային դիմանկարը՝ հայ հոգեւոր երգերու այս աննման սոխակին, իր լուսաշող էութեամբ, ճառագայթուն պայծառութեամբ, որուն էութեան խորքերուն մէջ կ'ապրէր կարծէք հոգեւոր երգը, իր հոգիէն կարծէք ծնունդ կ'առնէր ան, եւ ինք այդ հոգեբուխ երգը կը մատուցէր իր ունկնդիրներուն ի խորոց սրտի, ամենայն անարատութեամբ, որպէս աղօթք առ Աստուած: Լուսինէն կենդանի հաւատք էր, յոյս ու սէր, ներշնչում ու նուիրում...: Իր ունկնդիրները՝ զայն լսելով, կ'անէանային, եօթներորդ երկինք կը բարձրանային, ոգեղէն ոլորտին մէջ կը թեւածէին, քանզի ինքն էր այդպիսին: «Նրա երգեցողութեան մէջ երկրորդական էին վոկալը, տեխնիկան, առաջնայինը հոգին էր, նրա հաւատը: Հրեշտակ էր, սրբութիւն...Աստուծոյ հետ զրուցող անձնաւորութիւն», ինչպէս կը գրէ օփերային երգիչ, Արաքս Մանսուրեան: Որքան գեղեցիկ եւ ոգեշունչ կը հնչեն բանաստեղծ Լուսինէ Աւետիսեանի տողերը. «Լուսինէի սքանչելագործ ձայնը անյայտ ակունքից բխող սրբազան աղօթք է, որ մարդկային հոգին վերածում է տաճարի...Նրա ձայնը անյայտ ակունքից բխող սրբազան աղօթք է, որ Աստուծոյ ձայնը լսած նախաստեղծ մարդու սքանչացումն է վերընձայում մեզ...»: Նոյն միտքը կ'արտայայտէ դաշնակահար, երգեհոնահար Լեւոն Աբրահամեան. «Նրա երգեցողութեան մէջ աղօթք կար: Դա՛ էր նրա արուեստի իւրայատկութիւնը»: Իսկ երջանկայիշատակ Վազգէն Առաջին Վեհափառ Հայրապետը՝ Լուսինէի յուղարկաւորութեան ընթացքին արտասանած իր դամբանական խօսքին մէջ, Սուրբ Գայիանէ վանքի շիրմատան մէջ, ըսած է յուզուած ու արտասուաթոր աչքերով. «Յետ այսու, մենք պիտի լսենք Լուսինէի երգը երկնքից, զի այնտեղ՝ երկնքում, աւելացաւ եւս մի հրեշտակ», եւ Վեհափառի կարգադրութեամբ Լուսինէի աճիւնը կ'ամփոփուէր Ս. Գայիանէ վանքի գերեզմանատան մէջ:

Տող առ տող, ընթերցողը հաղորդակից կը դառնայ նաեւ Լուսինէ Ջաքարեանի կենսագրութեան մանրամասնութեանց հետ, թէ ինչպէս ան Ախալցխայէն ընտանեօք տեղափոխուէր էր Երեւան, յաճախէր էր Երեւանի Ռ. Մելիքեանի անուան երաժշտական ուսումնարանը, բացառիկ տաղանդ, աշխատասիրութիւն, նուիրում ցուցաբերելով, ապա՝ Երեւանի Կոմիտասի անուան պետական երաժշտանոցի մեներգային բաժինը, այնուհետեւ ան դարձեր էր Ս. Էջմիածնի Մայր Տաճարի երգչախումբի մեներգչուհի...: Ընթերցողը նմանապէս կը ծանօթանայ անոր կեանքի այլ կարեւոր հանգամանքներուն, թէ ինչ ներդրում ունեցած էր Էջմիածնի երբեմնի երգչախումբի ղեկավար Հրանդ Գեորգեանը Լուսինէի բացառիկ տաղանդի յայտնաբերման մէջ, մասնաւորաբար անոր կողակիցին՝ շարականագետ, բանասէր, երգիչ Խորէն Պալեանի ամբողջանուէր հոգածութեան մասին,



որով Լուսինէն կրցեր էր խորանալ հայ միջնադարեան երաժշտութեան եւ հոգեւոր երգեցողութեան մէջ:

Դժուար ժամանակներ էին, վստահաբար, բայց Լուսինէն՝ Աստուծոյ անիմանալի տնօրինութեամբ, վստահաբար, յայտնուեցաւ այդ դժուար ժամանակներուն, որպէս սրբուհի, երկինքէն երկիր իջած սրբուհի, բառին ամբողջական իմաստով, վերահաստատելու կապը Աստուծոյ եւ մարդուն միջեւ...: Դիպուկ են ՀՀ վաստակաւոր արտիստ Սարգիս Նաճարեանի տողերը. «Նրա «Սուրբ, սուրբ»ը դարձել էր բոլորիս հոգու նուէրը, հոգու սփոփանք, որ լսում էինք թէ՛ տխուր եւ թէ՛ ուրախ առիթներով:....Նա (Լուսինէ Զաքարեանը) դառնալու էր հոգեւոր երաժշտութեան, հոգեւոր լիցքի մեծ կրողը ոչ միայն բեմում, այլեւ մեր կեանքում», քանզի ան «աննկարագրելի պարզ ու սովորական անձնատրութիւն, բայց միեւնոյն ժամանակ վեհ եւ անմատչելի էր, երկնային եւ ոչ հողեղէն»:

Սուրբերը, մեծերը ընդհանրապէս, կու գան միշտ ալ դժուար ժամանակներուն, իրենց հոգիի, սրտի եւ մտքի ճառագայթով փարատելու տիրող մեզն ու մառախուղը մարդկանց սրտերուն մէջ, նոր լոյս սփռելու, դառնալու նոր խթան ինքնամաքրութեան, հոգեւոր լիցքի վերագարթման, մարդկային ու ազգային ինքնագիտակցութեան կոչ ու հրաւեր, դառնալու նոր կամար ու կամուրջ երկնայինի եւ երկրայինի միջեւ....

Սերգէյ Մանուէլեանի այս հոյակապ գիրքը նոյնպէս կը ծառայէ այս սուրբ նպատակին: Գիրքը ոչ միայն հոգենուէր Զօն է Լուսինէի անմահ յիշատակին եւ մեր մեծ արժէքին իւրօրինակ վերադարձն է կարծէք մեզի, այլեւ պատգամ մըն է ուղղուած մասնաւորապէս մեր նոր սերունդին՝ հաղորդուելու Լուսինէի սրբութեան, մեծութեան, երկնամուխ բարձունքին, հոգեւոր գերագոյն արժէքին հետ եւ ոգեզինուելու, հոգեպէս աշտարակուելու՝ մեր հոգեգուրկ ժամանակներուն տիրող՝ ոգիի սովի, էսամոլիկ դասալքութեան եւ նիւթապաշտ բարքերուն դէմ յանդիման: Քանզի Լուսինէն գերազանցօրէն հոգեւոր երեւոյթ էր հայ իրականութեան մէջ:

«Եւ փա՛ռք, ուրեմն, քե՛զ, երգող խաչքար,

Քե՛զ, մկրտութեան մաքուր աւազան,

Դարերից ձգուող մեր ոգու բարբառ,

Դարերից ձգուող լուսեղէն մեր ձայն....» Վահագն Դաւթեան

Պատի՛ւ քեզի, սիրելի Սերգէյ Մանուէլեան, որ եռամեայ տքնաջան աշխատանքովդ, մեզի կը վերադարձնես մե՛րը, որպէս հոգեւոր մանանա եւ լոյսի ճառագայթ: Վարձքդ կատա՛ր, սիրելի երիտասարդ բարեկամ, նորանոր ազգանուէր եւ հայրենաշէն իրագործումներու մաղթանքով:

ԵՐԱՆ ԳՈՒՅՈՒՄՃԵԱՆ

ՏԻԵԶԵՐԱԿԱՆ ԵԿԵՂԵՑՈՒ ՎԱՐԴԱՊԵՏԸ / Ռուզան ԱՍՏՈՅ

24/09/2015 , ԳՐԱԿԱՆ ԹԵՐԹ

Մինչև Նարեկացին և Նարեկացուց յետոյ ո՛չ համաշխարհային գրականութեան մէջ և ո՛չ էլ հայ գրականութեան պատմութեան բազմադարեան շերտերում մարդու աստուածանալու նարեկացիական մտքի երեւակայական ճախրանքները, ամէն բանում աստծոյ շունչը որպէս սեփական գոյութեան ինքնախոստովանութիւն ընդունելու, ամէնօրեայ ուղեկցի ինկարկումը որպէս քո ներքին սրբալոյս ես-ի, մարդկութեան բոլոր մեղքերի բեռնաթափման՝ կամաւոր գոհի և աստուածանմանի այսպիսի հոգեւոր շռայլութիւն՝ հոգեւոր անհորիզոն ողբերգութեան մէջ, կարծում եմ, չի եղել:



«Մատեան ողբերգութեան» պոեմի սկզբից մինչև աւարտը Նարեկացին Աստծոյ սպասուած հիւրն է որպէս աստուածաշնորհ անհատականութիւն՝ նա խօսում է ԱՍՏՈՅ հետ, իբրև վեհագոյն գրուցակցի ու խորապատկեր մտահոգի: Համարձակօրէն անտեսելով ժամանակի կղերական պարտադրանքները, Նարեկացին մարդու մէջ՝ ամէն ինչից վեր է գնահատում

բանականութեան ուժը, նրան վստահելով մտքի երիվարի սանձը: Նա դուրս եկաւ համամարդկային ստեղծագործական բոլոր չափանիշներից և Աստծոյ կողքին կարելոբեց մարդկային հոգու անկատարելութիւնը որպէս սքողուած բողոք՝ հենց իր, կատարեալ Աստծոյ ստեղծածի դէմ: Տասը դար առաջ այդ մասին մեկնել է Նարեկացին, տասը դար յետոյ նոյն կարծիքին ենք մենք, այսինքն՝ հօր իմաստասէրն ու հոգու քերթողահայրը յաւերժի եկուորն ու վկան է, Աստծոյ ճշմարիտ բանախօսը: Թէև դարերի քննադատներից ոմանց կարծիքով, Նարեկացին իբրև թէ չարաշահել է մարդու մեղքերի նկարագրութիւնը՝ նրան վեհացնելու փոխարէն, դարեր անց, տեղափոխուելով մեր իրականութիւն, կարծում եմ, եթէ Նարեկացին ողջ լինէր՝ մարդկային անսովոր արատների և քաղաքական նոր կանխբալիզմների մասին նրա կարծիքն ու նկարագրութիւնները առաւել կոշտ էին լինելու...

Առաջինը քրիստոնէութիւն ընդունած ազգը չէր կարող հոգեւոր ազգ չլինել: Հայը գիրք ու գիր սրբացնող և արարչաստեղծ ազգ է, որի ազգային առանձնայատկութեան յատկանշական կողմը, որպէս աստծոյ ժողովրդի, անարդարութեան դէմ ընդվզելն է: Յանձին Նարեկացու՝ Թոնդրակեան շարժումներից մինչև մեր խառնածին օրերը, մենք տեսնում ենք արդարութեան համար պայքարող հային, որի համար շատ աւելի կարելոբ է տիեզերական համամարդկային սկզբունքը՝ համակարգի պահպանութիւնը, քան անհատի սոցիալական պահանջները: Եւ սա է պատճառը, որ սերնդէ-սերունդ արդարամիտ ու պատուասէր հայը միշտ խուսափել է սոցիալական բողոքներից:



Իմ մանկութիւնն անցել է «Նարեկի» խորհրդաւոր շշուկների տակ: Մինչև 1937 թ. ռեպրեսիաները պապա Մաստարայի 5-րդ դարի կառոյց սուրբ Յովհաննէս Մկրտիչ եկեղեցու վանահայրն է եղել: Թոնրատան պատի ներսում, կապոյտ բեհեզի մէջ փաթաթած մի գիրք կար, որ պապիս մահից յետոյ էլ տնեցիները սրբօրէն էին պահում, համբուրում, ճակատներին հպում, իսկ եթէ գիւղում ծանր հիւանդ էր լինում, գալիս խնդրում էին «Նարեկը» մէկ օրով հիւանդի մօտ տանել որպէս ամենահաս ու բժշկող երեւոյթի:

Նարեկը մեր տան 150 տարեկան սուրբն է, այսօր էլ նա խորհրդաւոր հողաբոյր է ու հացահոտ... Սա կարծրատիպ չէ և ոչ էլ միֆական սարսուռ, այլ հոգուց բխած իրական աղերսների մեր խոստովանութիւնն է Նարեկացու զօրեղ գրչի, նրա պոէմի ու տաղերի և, որ ամենակարեւորն է, ԳԸԻ նկատմամբ, որից այն կողմ՝ բարձրագոյն Ես-ն է՝ Աստուած:

Մատեան ողբերգութիւն պոէմը տիտանական ժայթքում է: Եթէ վերածնութեան նախահայր Տանթէն իր «Դժոխքում» բացայայտեց մարդու մարմնական տառապանքները, ապա Նարեկացին իր չափազանց հարուստ բառամթերքի բարդ ու խրթին խաչմերուկներում վերամարմնաւորում է մարդկային հոգու բիրեղը, այն դարձնելով տիեզերական խօսքի անփոխարինելի ուղենիշ... Խոնարհուել պէտք է այն թարգմանիչների առջեւ, ովքեր գրաբարի իմացութեան ու նաեւ նարեկացիական բառամթերքի ովկիանոսի խորքերից կարողացել են թարգմանել և ընթերցողին ներկայացնել նրա անհատում հոգեւոր գանձերը որպէս բոլոր ժամանակների մարդկային հոգու նկարագիր: Առանձին հոգածութեամբ պէտք է արժեւորել Մկրտիչ Խերանեանի և Վազգէն Գեղորգեանի թարգմանութիւնները, նրանք անխաթար ու բնագրի հարազատութեամբ մարդկութեանը հասանելի դարձրին ընդհանրական Աղօթագիրքը: Նոր, ֆիզիկայի օրէնքների բարձրագոյն իմացութեամբ Նարեկացու բացայայտումը արժեւորուեց որպէս գիտական նոր յայտնագործութիւն ակադեմիկոս Յովհաննէս Դաթեանի կողմից: Նա «Նարեկացու ֆունդամենտալ դաշտի տեսութիւնը» գրքում ոչ միայն հայ, այլեւ աշխարհի մարդկութեանը ներկայացրեց միջնադարեան հոգեւոր գլուխգործոցը որպէս «Գեոնային լուսապսակ» տիեզերահանճար երեւոյթ, ինչպէս անուանել է ակադեմիկոսը, իսկ Նարեկացուն՝ որպէս այդ հզօր ինֆորմացիոն թագի կրողն ու կապաւորը: Դաթեանը նոր լոյս սփռեց հանճարի հրաբխային ժայթքումների, որը մշտապէս ճառագելով մարդկային բանականութեան կենսունակ բացառիկութեան ու ժողովրդի բնագոյներում՝ միշտ կենդանի է որպէս տիեզերական հրաշքի ներբողման աղբիր: Եւ փառք Աստծոյ, որ այսօր, շնորհիւ Յովհաննէս Դաթեանի թոռնուհու՝ Անահիտ Դաթեանի յամառ ջանադրութեան, Նարեկացու Ողբը, որպէս կենդանի խօսք, պահպանուել է մեր մեծատաղանդ դերասան Սօս Սարգսեանի՝ անկրկնելի ու խորհրդաշունչ ձայնով:

Հռոմի պապի կողմից Տիեզերական եկեղեցու վարդապետի ընծայած կոչումը Նարեկացուն նրա համամարդկային մեծ վաստակն էր, թէեւ ուշացած՝ սակայն անհրաժեշտ, որպէս գալիք սերնդի ինքնակերտման ու ինքնամաքման, Պարոյր Սեւակի խօսքերով ասած՝ անլռելի գանգակատուն:

Նարեկացին իր մահկանացուն կնքեց 1003 թ., նրա աճիւնն ամփոփուած է Նարեկ վանքի բակում, Արեւմտեան Հայաստանում...



Որքանով եմ մօտենում ճշմարտութեանը, չգիտեմ, սակայն փորձ եմ արել բացայայտել Նարեկացի անուան առեղծուածը՝ Նարեկացի- նա է Արարչի կողմից եկածը... Գուցէ ճշմարիտ է, ո՞վ իմանայ, չէ՞ որ գիտութիւնն անսահմանափակ է...

ՉԱՓԱԾՈՅ ԵՐԿԵՐ ԵՐԱՆ ԳՈՒՅՈՒՄՃԵԱՆԷՆ

ԻՄ ԱՇՆԱՆ ՄԷՋ....

Իմ աշնան մէջ գարուններ կան

Կարկաչահոս աղբիւրներ կան

Ծիլ ու ծաղիկ կայ բազմերանգ

Ծիածաններ կան եօթներանգ....

Իմ աշնան մէջ ամառներ կան

Կարօտակէզ ու սիրավառ

Թռչուն մը կեանքով սրարբած

Իր երգը կ'երգէ շարունակ....

Իմ մէջ կ'ապրի դեռ երախան

Միամիտ ու անապական

Հեքիաթներով կ'օրօրուի ան

Աչքերուն մէջ երազ անմար....

Եղանակներն իրար խառնած

Չունիմ ես ժամ ու ժամանակ

Կը թեւէ վեր հոգիս ազատ

Ձմրան բուքին, գոլին ամրան

Կը խոյանայ երկինքն ի վեր

Թէ որ ձիւնը հաստ շերտ կապէ

Աշունն հրաժեշտի խօսք ըսէ

Գարուն կը ծաղկի հոգւոյս մէջ....Ե.Գ.



ԾԱՌԻ ՄԸ ՊԷՍ...

Ծառի մը պէս կեանքս ապրիմ

Ըմպեմ լոյսը արեգակին

Պարեմ հովուն հետ նազանի

Զեփիւտին հետ թրթռամ մեղմիւ...

Թող բոյն շինեն ճիւղերուս վրայ

Թռչունները ուրախ-գուարթ

Դայլայլն անոնց հնչէ միշտ վառ

Զերթ ցնծուն երգ, համանուագ....

Լուսին, աստղեր, երկինքը մով

Վրաս հսկեն մշտագորով

Բիւր երագով զիս պարուրեն

Տիեզերքին զիս ծիածանեն....

Սաղարթներս՝ ամպ-հովանի

Դառնան յոգնած մարդ էակին

Միրգեր հիւթեղ ու քաղցրահամ

Բաշխե՛մ, բաշխե՛մ ես լիառատ: Ե.Գ

ՅՈՐԴԱՌԱՏ ՍԵՂԱՆ ԷՐ

Յորդառատ սեղան էր

Պէս-պէս բարիքով

Ե՛ւ զինի ե՛ւ հաց էր

Աշնան միրգերով....



Շուայտ կերուխում

Եւ գինարբուք էր

դփացած, խնդուն

Մի խառնամբոխ էր....

Դուրսը մայթին վրայ

Զառամած կին էր

Աչքերը քաղցած

Սեղանին էր յառեր....

Ո՞վ պիտ'նկատէր

Կինը սովահար

Լքուած աշխարհէն

Դէմքով դալկահար....

Կը յափրանային

Ու տեստով առատ

Կ'արբենային

Գինիով հուրհրան....

Կինն այդ հեւասպառ

Մերկ մայթին վրայ

Քաղցէն ու ժաթափ

Հուսկ շունչը կու տար....

Առտուան ժամին

Զայն տեսան մարդիկ

Քարացած խղճի

Զոհը ցաւագին....Ե.Գ.



ԽԱԺԱՄՈՒԺԻՆ ՄԷՋ....

Խաժամուժին մէջ ամբոխին

Մենութիւնս լուռ կը ճչայ

Ամէնուն մէջ բայց առանձին

Մարդն ինքն իր մէջ կը մխայ....

Խաժամուժին մէջ ամբոխին

Աղմուկ ու ժխտք, թոհուրոհ է

Տղեկ մը հոն լուռ, առանձին

Տխուր երգ մը կը նուագէ....

Երգն այդ կարծես ողբերգ ըլլայ

Լքեալ հոգիի ճիչ, աղաղակ

Կամ աղօթք մը կարծես ըլլայ

Առ Բարձրեալն աղապատանք....

Ո՞վ սակայն պիտի նկատէ

Աղերսանքը հոգւոյն անտէր

Որ կը մխայ նուագին հետ

Կը կորսուի ժխտքին մէջ....Ե.Գ.

ԿԵԱՆՔ ԿԱՅ....

Կեանք կայ դաժան

Գորշ ամպամած

Ցաւով կուտակ

Բեռնաւորուած ...



Կեանք կայ ուրախ

Մաքուր, անամպ

Շողով առատ

Արեգական....

Փոփոխական

Կեանքն է սակայն

Որ կը ցանկամ

Ես շարունակ....

Տեսնել ծիածան

Վառ եօթներանգ

Անձրեւէն ետք

Ամպ-տխրութեան....Ե.Գ.

ԲՈՊԷԱԿԱՆ....

Դուրսի ճրագս միշտ վառ էր

Շողափայլ էր, ճաճանչագեղ

Ի՞նչ իմանար մարդը սրտնեղ

Ներքին կրակը որ միշտ կ'այրէր

Կը հուրհրատեր բոցակէզ

Եւ լոյս կու տար ճրագիս ոսկէ...Ե.Գ.

ԲՈՊԷԱԿԱՆ

Լռութիւն է, խոր լռութիւն

Յաւէտ մեկնածի լռութիւն

Զգաստացնող

Խորասուզող



Լռութիւն....

Կար ան երէկ, հիմա չկայ

Աշխարհի չափ հին պատմութիւն

Արցունք-արցունք ողբերգութիւն

Յետոյ նորէն կեանքի ընթացք

Սովորական հին առօրեան

Որ կը կլանէ միտք ու երազ

Մինչեւ հասնի խոր լռութիւն

Եւ դարձեալ խոր զգաստութիւն....Ե.Գ.

ՈՐՊԷՄ ՄՐՏԱԳԻՆ ՄԱՂԹԱՆՔ...

Օրերուն այս տարեվերջի

Եւ նոր սկիզբին որ պիտի գայ

Միրտերը մեր թող կամարուին

Հոգիէ-հոգի ծիածան ըլլայ....

Մէր, բարութիւն ճառագայթեն

Միրտերն համայն մինակ չզգան

Իրարմով լոկ թող ամրանան

Իրարմով լոյս թող ճառագեն....

Մութը սրտին թող փարատի

Լոյս-մոմերով աշտանակուած

Դառնայ ճրագ մթնահալած

Խորան լուսոյ եւ հաւատի...Ե.Գ.



Տարեվերջ է

Ինքդ քեզի

Հաշիւ տալու

Յատուկ պահ է....

Ինքդ խղճիդ

Դեմ յանդիման

Զրուցելու

Անգին պահ է....

Ըրած-չըրած

Արարքներուդ

Անդրադարձի

Խորունկ պահ է....

Զգաստանալու

Մթափելու

Ճանաչելու

Հին-նոր պահ է..

Մեղք քաւելու

Վերյառնելու

Նորոգ պահ է..

Մինչեւ որ գայ

Նոր տարեվերջ....Ե.Գ.

Յօդուածներ

Հայ դպրոցի փակման-բացման մասին

ՅԱԿՈԲ ՊԱԼԵԱՆ

Ըսինք 100ամեակ՝ եւ դպրոց կը փակենք... Հայապահպանման թատրոն... Դրական կերպով



կը յուզուիմ ամէն անգամ երբ կ'իմանամ, որ հայկական սփիւռքներէն օժանդակութիւն կ'ըլլայ Հայաստանի դպրոցներուն: Ազնիւ գիտակցութեան փաստ: Բայց այդ ազնուութիւնը միշտ կարճատեսութիւն համարած եմ, երբ կանգնած եմ սփիւռքներու մէջ հայկական վարժարաններու փակման փաստին առջեւ: Սփիւռքներու հայկական ինքնութեամբ տոկալու եւ տեւելու հիմնակառոյցը հայկական

վարժարանն է, առանց որուն դեռ ժամանակ մըն ալ կրնանք ապրիլ որպէս ծագումով հայեր, կարգախօսներ կրկնելով: Այս հարցի մասին չէի ուզեր խօսիլ, քանի որ յաճախ այն զգացումը կ'ունենայի, որ յոռետես կը դառնայի, եւ յոռետեսութիւնը ընկերութեան համար աւերիչ ախտ է: Մեծ խորշակներէ անցած հայկական Պոլիսը ինքնութիւն պահեց, քանի որ դպրոցներ պահեց, գաւառի հայերը փրկեց, քանի որ պատրիարք մը Դպրեվանք հաստատեց: Բայց կրկին հայկական վարժարան մը փակուեցաւ աշխարհի մեծագոյն «հայկական քաղաք» Լոս Անճելէսի մէջ, ուր հայկական կեդրոնի մը ճակատին անուն մը գրուած տեսնելու համար բազմաթիւ միլիոններ կը տրուին: Կը փակուի հայկական դպրոց մը, որուն հովանաւորները, անհատներ եւ կազմակերպութիւն, նիւթական մատակարարման խնդիր պէտք չէ որ ունենային: Դպրոցը կը փակուի, շէնքը կը վաճառուի: Ի՞նչ բանի կը յատկացուի գոյացած գումարը: Դպրոցի բացումը կը յայտարարուի, ինչո՞ւ փակումն ալ փողով-թմբուկով չի յայտարարուիր բեմ բարձրացող երեւելիութեան մարմաջ ունեցող ճառախօսներով:

Անցեալ դարու վերջին քառորդէն ի վեր, սփիւռքներու մէջ, տասնեակներով հայկական դպրոցներ փակուեցան, պատմական հարուստ ժառանգութեամբ, սերունդներ դրոշմած, եւ այլ, ինչպէս Փարիզի Միխիթարեաններու Սամուէլ Մուրատ հոշակաւոր վարժարանը եւ Կիպրոսի նախախնամական դեր կատարած Մելգոնեան կրթական հաստատութիւնը: Ան նախախնամական դեր ունեցաւ Միջին-Արեւելքի հայութեան համար, եւ հիմա, որ Կիպրոսը Եւրոմիութեան անդամ է, կրնար նոյն նախախնամական դերը ունենալ Եւրոպայի հայութեան համար, ուր գիտենք որ դպրոցներու առատութիւն չկայ: Դպրոցներ փակուեցան, երբ Հայկական Սփիւռքը երբեք այսքան մեծ համրանք չէր ունեցած: Տրամաբանական հետեւողութեամբ, այսօր աւելի մեծ թիւով դպրոցներու կարիք պէտք է ըլլայ: Երեւոյթը համազգային ուշադրութեան առարկայ չեղաւ, ոչ ոք համազգային պատասխանատուութեան չկանչուեցաւ, եւ կեանքը կը շարունակուի իր մեծ ու պզտիկ փառասիրութիւններով, հրավառութիւններով, Հայաստան երթելուկով,



խորհրդածողովներու մասնակցութեամբ եւ ամէն առիթով շնորհուած... շքանշաններով: Դժբախտաբար Սփիւռքը չունի համազգային իրաւասութեամբ օժտուած ղեկավարման կառոյց, որպէսզի էական հարցերու մասին քննութիւն կատարէ, պատասխանատուութեան կանչէ, խօսի հանրային կարծիքին եւ վճիռ կայացնէ: Չարութիւն թող չհամարուի եթէ ըսենք, կղզիացման դրութեան պատճառով, ազգային հիմնական կարեւորութիւն ունեցող ինդիւիդներուն ստիպուած կ'ըլլանք թաղային միութեան մը ոճով վերաբերիլ: Այսինքն ըսել, որ աշխարհ չի քանդուիր եթէ հայկական վարժարան մը փակուի: Դպրոցի մը փակումը ազգավնաս գործ է եւ չես գիտեր ինչ-ինչ պատճառներով ախտաճանաչում չի կատարուիր եւ պատասխանատուներ հրապարակային քննադատութեան չեն ենթարկուիր: Դպրոցի մը փակումը ճակատամարտ մը կորսնցնելու համազօր է, երբ անպակաս ճառերու մէջ կը կրկնուի, որ Հայկական Սփիւռքը չանհետանալու պատերազմ կը մղէ: Բարեբախտաբար դեռ կը պատահի, որ դպրոցի նախախնամական դերին հաւատացող քաջեր կը յանդգնին նոր դպրոց բանալ:

Սփիւռքի պայմաններուն մէջ, հայ ազգային-քաղաքական հիմնական առաջադրանք է, եւ պէտք է ըլլայ, վերհամայնքային, վերկուսակցական, վերջոյցական: Ան մանկավարժական-ուսուցողական ծրագիր է ամէն բանէ առաջ, այդ ծրագիրն է որ իմաստ կու տայ դպրոցին եւ վստահութիւն կը ներշնչէ ծնողներուն եւ նախաձեռնողներուն: Այլ խօսքով, դպրոցի մը նախաձեռնողները եւ տէրերը մանկավարժական-ուսուցողական ծրագիրը կրնան պահանջել, բայց իրենք չեն անոր յղացողները եւ գործադրողները: Այդ ծրագիրը կը մշակուի եւ կը գործադրուի մանկավարժական որակաւոր անձնակազմին կողմէ: Կրթական հաստատութիւն մը, եթէ չունի մանկավարժական-ուսուցողական ծրագիր, դատապարտուած է ճահճացման: Դպրոցի «տէր»երը պիտի հասկնան, որ կրթական-մանկավարժական աշխատանքը մասնագիտական է, ոչ միութենական է ոչ ալ տիրացուական: Այսինքն, դպրոցը հանրութեան պէտք է ներկայանայ իր մանկավարժական-ուսուցողական ծրագիրով: Դպրեվանք մը ունի իր մանկավարժական-ուսուցողական ծրագիրը, կը նպատակադրէ ժողովուրդի հոգեմտաւոր կարիքներու բաւարարումը: Անցեալին, մասամբ ալ այսօր, դպրեվանքերը, ուսուցիչ եւ գրող կը հասցնէին ժողովուրդին, այլ կառոյցներու բացակայութեան:

Աշխարհիկ ընկերութիւնը ունի իր կարիքները:

Անոր բաւարարման համար պետութիւնները ունին իրենց դպրոցները: Յաճախ կ'ըսուի, որ քաղաքակիրթ երկիրներու պետական վարկերու մեծագոյն տոկոսը կը յատկացուի դպրոցին, կրթական գործին: Հայկական Սփիւռքը պետութիւն չէ, բայց աւելի քան իր հողին վրայ ապրող ժողովուրդը, ան անմիջականօրէն իր ինքնութեամբ ապրելու խնդիր ունի, իսկ այդ ինքնութիւնը կը կերտուի-կը պահուի դպրոցով, ոչ կարգախօսներով, ոչ ալ խրախճանքներու ընթացքին գոռացող բարձրախօսներու աղմուկով:

Երբեմն քաջութիւն պէտք է ունենալ, անարժան լուսապսակները դիմակի պէս վար առնելու, եւ ըսելու, թէ ինչո՞ւ կը փակուի դպրոց մը, եւ կամ օր մը կրնայ փակուիլ դպրոց մը: Դպրոցներու շուրջ դարձողներ կան, որոնք մանր ետերու բաւարարութիւն կը փնտռեն, որոնք մինչ այդ հայ դպրոցի շրջափակէն ներս ոտք դրած չեն ըլլար: Ի՞նչ ընելու կու գան:



Դպրո՞ցն է նպատակ, թէ իրենց եսը: Դպրոցաշինութիւնը ազգակերտ նպատակ է. այդ նպատակը քարը եւ աղիւսը չեն, այլ անոր բովանդակութիւնը, գոր կը կոչեն մանկավարժական-ուսուցողական ծրագիր: Երբեմն կը մտածեմ, որ դպրոցի մը բացման առիթով հանդիսութիւն կը կազմակերպուի, բեմին վրայ մարդիկ զիրար կը հրմշտկեն պատմական լուսանկարին վրայ անմահանալու համար: Դպրոցի մը փակման առիթով ինչո՞ւ հանդիսութիւն մը տեղի չունենար, որպէսզի կրթական գործի ապագային իրապէս հաւատացողներ հոտած հաւկիթ եւ փտած լօլիկ տեղացնեն դպրոց փակող վարչագէտներուն զլխուն, որպէս դամբանական:

Իսկ մանկավարժական-ուսուցողական ծրագիրէ անտեղեակ եւ անոր չհաւատացող այդ վարչագէտները՞ ... Անոնք են այսօրուան եւ պիտի ըլլան վաղուան դպրոց փակողները, որոնք կը գինովնան տեսքով, մարմարով, գինեձօնով: Տարիներ առաջ դպրոց փակուեցաւ, որովհետեւ խնայողութեան պիտակի տակ ուսուցչական որակը պակսեցաւ, եւ աշակերտութեան համրանքն ալ հետեւեցաւ նոյն նուազման ընթացքին, մինչդեռ որակի բարձրացումը պիտի աճեցնէր համրանքը եւ դպրոցը պիտի տեւեր:

Դպրոցի մը փակման առիթով դամբանական չի խօսուիր, գինեձօն չի կազմակերպուիր: Դպրոց կը փակուի մութի մէջ: Իսկ զարմանալին այն է, որ հայ զանգուածները, Հայաստան եւ սփիւռքներ, անոնք որոնք ճառ կը խօսին դպրոցի մը բացման եւ ներկայ կ'ըլլան գինեձօնի, ընդարմացման վիճակի մէջ կը մնան, կ'ենթարկուին, կը լռեն, փոխանակ ազգի գոյատեւման իրաւունքը պաշտպանելու: Հայ դպրոցը ազգին կը պատկանի, ոչ միութեան մը, ոչ թաղականութեան մը: Այս վերջինները հաշուետու են ազգին, իրենց տրուած վստահութեան համար: Ինչպէ՞ս բացատրել դպրոցներու փակման դիմաց ազգի անդամներու կրաւորականութիւնը: Ի՞նչ կը բանին հանրային կարծիքը առաջնորդելու կոչուածները եւ կառոյցները: Այս կրաւորականութեան քննադատութեամբ պէտք է դատել լուսարձակներէ եւ բարձրախօսներէ հոսող խօսքի կեղծիքի մանրավաճառները: Սփիւռքներու համար ի՞նչ աւելի աւերող է քան հայ դպրոցի փակումը: Սրահի մը մէջ հաւաքուիլ արժէքներու ցուցադրութեան համար կամ տարին անգամ մը փողոց իջնել դատ մը պաշտպանելու համար, պիտի չփոխարինեն հայ դպրոցը: Այս գիտակցութեամբ ճակատ պէտք է յարդարել, զօրաշարժի ենթարկել հայ զանգուածները, աստ եւ անդ, դպրոցի մը փակման որոշում կայացնողներուն դէմ, եւ պայքարի՛լ, որպէսզի մեր դպրոցները տոկան եւ տեւեն իրենց իրաւագային մանկավարժական-ուսուցողական ծրագիրով: Պէտք է գիտնալ, թէ ո՞ր եւ ինչո՞ւ ներդրումներ կ'ըլլան, միշտ նկատի ունենալով Սփիւռքի ազգային ինքնութեամբ տոկալու եւ տեւելու անմիջական եւ հեռանկարային գաղափարախօսութիւնը:

3 Դեկտեմբեր 2015 Նուազի-լը-Կրան



Տեսակէտ

Դարադարձի Անդոհանք Եւ... Մարտակոչեր Մեր Գասպար Տէրտէրեան,

Պէյրուք, 1 Փետրուար 2015

Անտարբեր ու ձեռնպահ լինել

Ոճիրի հանդէպ՝ միեւնոյն է

Թէ՛ մասնակից լինել նրան...:

ՎԱՀԱՆ ՓԱՓԱԶԵԱՆ

Ըմբոստացումը՝ պարտականութեանց սրբազնագոյնն է...:

ԺԱՆ-ԺԱՔ ՌՈՒՍՍՕ

Դարադարձի այս մեծ ստուգատեսին, Հայութեան «անելիք»ը՝ գլխաւորաբար, մեր ՆԵՐՔԻՆ ճակատին վրայ է... ոչ՝ ԱՐՏԱՔԻՆ:



Մեր ներքին ճակատի ցաւերը առանց յաղթահարելու, եւ ախտերը առանց դարմանելու՝ արտաքին ճակատի վրայ մեր կազմակերպած բոլոր ցուցադրական, դիմակահանդէսային ու ֆոլքլորային միջոցառումները՝ անցողիկ են, պղպջակային եւ ինքնախաբէական: Եւ այդ բոլորը մեզ արգահատելի եւ խղճալի կը դարձնեն միջազգային հանրային կարծիքին առջեւ:

Ժողովուրդ մը, որ չէ դարմանած իր ներքին ախտերը եւ... օտարներէն կը սպասէ արդարութիւն՝ անոնց վրայ կը թողու մուրացիկի տպաւորութիւն, եւ անոնք՝ մուրացիկի մը նետուած հացի կտորէ մը տարբեր բան չեն նետեր այդ մուրացիկին վրայ...:

Հայութիւնը ազնիւ օտարներէն աջակցութիւն եւ արդարութիւն կրնայ ակնկալել միայն այն պարագային՝ երբ արդէն կրցած է փրկուիլ իր ներքին երկու ծանրակշիռ ախտերէն, որոնք կը հիւծեն զինք... արտասահմանի մէջ՝ իր անտիրականութիւնն ու անկեղբոնացուածութիւնը, իսկ Հայաստանի մէջ՝ ապագային օլիգարխներու միահեծան բռնատիրութիւնը...: Այսինքն, արտասահմանի մէջ՝ Տարագիր Արեւմտահայութիւնը կեղբոնական, ներկայացուցչական (ընտրովի) եւ միակ լիազօր մարմնի մը մէջ խմբելէն առաջ, իսկ Արեւելահայաստանի մէջ՝ ապագային օլիգարխներու միահեծան բռնատիրութիւնը վերացնելէ առաջ, Հայութիւնը իրաւունք չունի յուսալու ազնիւ օտարներու նեցակցութիւնը: Այս երկու մահացու ախտերը յաղթահարելէ առաջ, Հայութիւնը չի կրնար յարգանք եւ ուշադրութիւն պահանջել միջազգային հանրային կարծիքէն, եւ անկէ ակնկալել շօշափելի աջակցութիւն:



Այս ներքին երկու մահաբեր ախտերուն յաղթահարումը ներքին կարգով պիտի փաստէ թէ՛ Հայութիւնը որոշած է ապրիլ ու գոյատեւել, եւ այսպիսով հօրացած՝ պիտի շահի յարգանքն ու վստահութիւնը ազնիւ օտարներուն, եւ նոյնիսկ՝ յարգանք պարտադրել անազնիւ, թշնամի օտարներուն: Այսպիսով միայն Հայութիւնը դադրած պիտի ըլլայ անգոր մուրացիկ մը նկատուելէ, եւ դարձած՝ հօր եւ ինքնավստահ պահանջատէր մը, որ տիրութիւն կ'ընէ արտասահմանի թէ Հայաստանի մէջ: Ուրեմն այսօր, դարադարձի այս մեծ ստուգատեսին՝ Հայութեան գլխաւոր «անելիք»ն է՝

Ա) Սփիւռքի մէջ, համահայկականօրէն ստեղծումը՝ Տարագիր Արեւմտահայութեան Համաշխարհային Քոնկրէսին (ՏԱՀՔ), եւ

Բ) Հայաստանի մէջ, համահայկականօրէն վերացումը՝ ապագային օլիգարխներու միահեծան բոնաստիրութեան համակարգին:

Եւ այս երկու առաջադրանքները իրարու լրացուցիչ հրամայականներ են, որ միասնաբար պիտի նուաճեն ճշմարիտ, առողջարար եւ կենարար համահայկականութիւնը, որուն կարիքը ունին՝ մեր հաւաքական գոյամարտին երեք ջոկատները՝ Տարագիր Արեւմտահայութիւն, Արեւելահայաստան եւ Արցախ: Այս երկու առաջադրանքներու մեկնարկը գէթ՝ հարկ է որ սկիզբ առնէ դարադարձի այս մեծ ստուգատեսին, որպէսզի՝ Հայութիւնը մեծ հիասթափութիւն մը չապրի 2015-ին: Այս է մեր ապրած անդոհանքին պատճառը եւ՝ մարտակոչերուն դրդապատճառը:

Կը ձայնակցինք թրքագետ Արտակ Շաքարեանի սա գնահատականին.–

«Հայոց Ցեղասպանութեան 100-րդ տարելիցին առիթով արուած քայլերը մինչեւ այսօր՝ եւ դրական չէի գնահատի: Մեծ հիասթափութիւն է սպասելու հայ հասարակութեանը, որովհետեւ մենք մեծ ջանք ենք ներդնում պատկերացնելու համար, թէ 100-ամեայ տարելիցը ինչէ՛ր կը փոխի: Դրանից զատ՝ Ցեղասպանութեան ճանաչումից յետոյ մեր յաջորդ քայլերը չգիտենք: Այս իմաստով մենք շատ բան ունինք անելու, ոչ թէ մի քանի միջոցառում կազմակերպելը, կամ երկրորդ սորտի ինչ-որ մի ֆիլմ նկարահանելը...» («ՀԱՅԱՍՏԱՆ», Աթէնք, 15 Դեկտեմբեր 2014):

Մեր անդոհանքէն բխող մարտակոչերուն յանգեցանք հետեւեալ խորհրդածութիւններուն լոյսին տակ:

Ա. ՏԱՀՔ-ի ստեղծումին հրամայականը

Շահան Շահնուր յետ եղեռնեան մեր «ՆԱՀԱՆՁԸ ԱՌԱՆՅ ԵՐԳԻ»ն բացայայտեց եւ մեզ զօրակոչեց հետեւեալ բառերով.–

«Ազգ, Կռուէ՛ ամբողջութեամբը միսերուդ:

Եթէ միսերդ ինկան պատառ-պատառ, կռուէ դնդերներովդ, ջիղերովդ, երակներովդ:

Եթէ պայքարը զանոնք լափեց՝ կռուէ ոսկորներովդ:



Եթէ ոսկորներդ փշրուեցան, կռուէ ծուծովդ:

Եթէ ծուծ չմնաց, կռուէ աճիւններովդ:

Եթէ ասոնք ալ տարտղնուեցան, կորսուեցան, չքացան, այն ատեն կռուէ՝ ազգ, Հերոսովդ»:

Հայութիւնը այսօր կարիքը ունի ազգային հերոսներու, Ազգային Հերոս Անդրանիկի հաւատարիմ յաջորդներու՝ մեր ներկայի համակողմանի գոյամարտին մէջ, որ սահմանափակուած չէ ռազմական ոլորտին մէջ, այլ կ'ընդգրկէ միւս բոլոր ոլորտներն ալ հաւասարապէս...:

Անկախ պետականութեան կառուցումի ոլորտը կը պահանջէ՝ պետական մտածելակերպով օժտուած հերոսներ, որոնք քաջ գիտեն թէ՝ անկախ ու գերիշխան պետութիւն կառուցելու նախապայմանը անկախ ու գերիշխան, այսինքն՝ ազգային անկախ տնտեսութիւն ունենալն է: Իսկ քաղաքական ուժ ներկայացնելու համար, աշխարհացրիւ եւ օտարահպատակ Սփիւռքի Տարագիր Արեւմտահայութեան բեկորները հարկաւոր է համախմբել համահայկական ոգիով՝ միակ կեդրոնական կառոյցի մը մէջ, անոնց տալու համար միաւորուած քաղաքական հաւաքականութեան հանգամանք եւ միջազգային կարգավիճակ: Որովհետեւ՝ Տարագիր Արեւմտահայութեան քաղաքական լիազօր կեդրոնի բացակայութեան, կը տիրէ աւատապետական տրոհուածութիւն եւ՝ անկարելի դարձնելով հայկական քաղաքական կեդրոնական հանրային կարծիքի ստեղծումը, եւ այս «համահայկական քաղաքական պարապ»էն կ'օգտուին ազգին թշնամիները եւ զայդ կը լեցնեն իրենց քարոզչութեամբ եւ զաղափարականով... որ ոչ միայն ապագային է, այլեւ՝ հակագային:

Հանճարեղ Եղիշէ Չարենց մեր համահայկական քաղաքական ու կազմակերպչական ուժին մէջ կը տեսնէր մեր փրկութիւնը եւ յեղափոխական ռոմանտիզմով կը յուսար՝

Վերադառնան այիտի դեռ

Հազար սրտեր ՏԱՐԱԳԻՐ

Ցրուած հողմով հրաքիրտ

Սրտեր քանի՛ դեռ քանի՛

ՀՈՂՆ են իրենց անրջում...

Բայց մենք այսօր Տարագիր Արեւմտահայութիւնս, տակաւին կը յիշե՞նք մեր հողերը... կ'անրջե՞նք հասնիլ մեր հողերուն... Արարատի փէշերուն..., երբ մեծ բացական համահայկականութիւնն է եւ ազգային ամէն կառոյց տրոհուած է եւ՝ կուսակցականացած՝ եկեղեցին, մամուլը, դպրոցները, մշակութային ու մարզական միութիւնները մինչեւ անգամ բարեգործական կազմակերպութիւնները, որոնց մեծագոյնը այսօր կը գտնուի ամերիկեւսիոնական հակակշիռին տակ, այսինքն՝ մեր թշնամիներու հակակշիռին տակ, որուն շօշափելի փաստն է՝ Մելգոնեան Հայ Լոյսի Տաճարին փակումը..., եւ կամ՝ Մեծ Եղեռնի հարիւրամեայ տարելիցին համար, սիոնամասոնական «անմոռուկ»ին ընտրութիւնը որպէս



խորհրդանիշ... որուն հայկականը՝ Ծիծեռնակաբերդի Եղեռնի անփոխարինելի Յուշակոթողն է:

Հողին կառչելու շեփոր մը հնչեցուց նաեւ տեսլապաշտ յեղափոխական Վազգէն Շուշանեան, գոչելով՝ «Կ'անցնին բոլոր փոթորիկներն ու բոլոր ահագնադորդ պատերազմները, կ'անցնին բոլոր հորդաներն ու բարբարոսները, կ'անցնին բոլոր հերետիկոսներն ու բոլոր պզտիկ պարոնները՝ իրենց սուտ իմաստութեամբ: Հայոց ազգ՝ քայլերդ դուրս մի նետեր այս հողերէն: Եթէ նոյնիսկ ստիպուած ըլլաս՝ անգամ մը եւս ողնայարդ ծռել, ողջ հասակովդ ինկիր մեր կարմիր հողերուն վրայ, որուն վրայ սողա՛լը աւելի լաւ է քան թէ՛ գլուխ ցցելը ուրիշի սահմաններուն վրայ, քանզի ճակատագիրդ հոս է, եւ սրբութիւնդ՝ հոս, վասնզի հոսկէ է միայն, որ վաղը բոլոր ցորենները կրնան բարձրանալ գեղուղէ՛շ՝ բոլոր ակօսներէն...: Մենք, երիտասարդներս, կ'ուզենք հաւատալ հաւատարմութեամբ թէ՛ այս ժողովուրդը չէ մեռած ու պիտի որոշէ ապրիլ...: Թողու՛ որ արտասահմանի հայութիւնը վերածուի անբաղձալի մուրիկներու, անպատիւ շահադէտներու եւ անազգ փերեզակներու բազմութեան մը, յանցանք մըն է քաղաքակրթութեան դէմ եւ կը նշանակէ՛ պատրաստել դամբարանը վաղնջական ժողովուրդի մը...»:

Արեւմտահայաստանի մեր հողային պահանջատիրութիւնն է՝ ուրեմն, որ շօշափելի նպատակ մը պիտի տայ մեր ազգապահպանումի քարոզին, եւ՝ Տարագիր Արեւմտահայութեան աշխարհասփիւռ եւ օտարահպատակ բեկորները պիտի փրկէ՛ անազգ փերեզակներու բազմութեան մը վերածուելու ստոյգ վտանգէն, երբ անոնք հետեւին «ուր հաց՝ հոն կաց» նշանաբանին: Եւ մեր հողային պահանջատիրութիւնը գործնականացնելու համար՝ Միջազգային Հանրային Իրաւունքը մեզմէ կը պահանջէ, որ մեր բեկորները վերակազմակերպենք՝ որպէս միաւորուած հայրենագուրկ Արեւմտահայութիւն, զայն օժտելով՝ միջազգային հաւաքականութեան կարգավիճակով... այսինքն՝ ստեղծելով ՏԱՀՔ-ը...:

Եւ՝ Վահան Թեքեան, «Սփիւռք» վերնագրով իր քերթուածին մէջ, երբ հարց կու տայ թէ՛ ինչ մաղթանք կրնայ ընել անոնց, տարագիրներուն, որ «անոնք ունենան կեա՛նք մը անվի՛շտ ու հանգչի՛ն այլեւս...», թէ ոչ՝ «վրիժակեզ այրին, ու ետ նային միշտ» չմոռնալով իրենց հայրենագրկումը, Արեւմտահայաստանի հայաթափումը եւ բռնազաւթումը...: Ան բախտաւոր եղաւ, որ չտեսաւ Արեւելահայաստանի ալ հայաթափումը, Արեւելահայութեան ալ հայրենագրկումը, այս անգամ ալ՝ ոչ թէ թուրքին պարտադրած Տարագրութեամբ այլ... հայանուն օլիգարխներու համակարգին անարդարութեամբ:

Թեքեան կը մաղթէր, որ տարագրեալները «վրիժակեզ այրին, ու ետ նային միշտ» չմոռնալու համար իրենց տարագրեալի, հայրենագրկեալի վիճակը, եւ փորձելու՝ հայրենադարձութիւնը, հողային պահանջատիրութեան պայքարով... ՏԱՀՔ-ի ստեղծումով:

Թեքեան կ'ըսէր՝ «Ես պատրաստ եմ ամէն ժամ սլանալու արդար դատին ընդառաջ՝ ըմբոստութեամբ սրբազան, ու շանթաբորբ կենալու անիրաւին գլխուն վրայ, արհամարհելով նկրտումները յետին, հանգիստն ու բարութիւնն ալ տկար...»: Տարագիր

Արեւմտահայութիւնը պիտի կարողանա՞յ հետեւիլ անոր...: Այս է ցուատանջ հարցումը մեր անդոհանքին:

Շարունակելի

Համակարգի Վերացման Հրամայականը

Կրակի Հետ Թրքական Խաղը

ՎԱՉԷ ԲՐՈՒՏԵԱՆ

Երեքշաբթի, 24 Նոյեմբերին, թրքական օդուժը հարուածեց ռուսական օդուժին պատկանող օդանաւ մը: Ռուս օդաչուները անկարգելով դուրս ցատկեցին, սակայն անոնցմէ մէկը



սպաննուեցաւ, շատ հաւանաբար «ընդդիմադիր» կոչուած գօտիէն անոնց դէմ արձակուած կրակոցներուն հետեւանքով: Մամուլը հեղեղուած է օդային միջադէպին մասին լրատուութեամբ եւ մեկնաբանութիւններով:

Անկախ այն հարցադրումներէն, որ արդեօք ռուսական օդանաւը խախտած էր Թուրքիոյ օդային տարածքը թէ ոչ, չոր իրականութիւնը այն է, որ այս դէպքը յաւելեալ փաստն է Թուրքիոյ կողմէ Տաէշին տրամադրուող գործնական զօրակցութեան:

Անվիճելի փաստ է, որ որ Տաէշը կը վայելէ ամէն ձեւի թրքական զօրակցութիւն՝ զինում, մարզում, ազատ երթելէկ, դրամ: Ոչ ոքի համար գաղտնիք է, որ Տաէշի հակակշիռին տակ գտնուող Սուրիոյ քարիդահանքերէն կողոպտուած քարիւղը կը գնուի Թուրքիոյ կողմը եւ նոյնիսկ Թուրքիոյ նախագահ Էրտողանին զուակին՝ Պիլալ Էրտողանի անունը կը նշուի իբրեւ այս «ալիշ – վերիշ»ին գլխաւոր գնորդ կողմ:

Ինչպէս մեր նախորդ յօդուածով նշած էինք, Տաէշը այսօր վերածուած է Թուրքիոյ աղտոտ գործերը ընող զինեալ խմբաւորումի: Տաէշը խաղաքարտ մըն է Թուրքիոյ ձեռքը, որ Անգարա պատրաստ է գործածելու բոլոր անոնց դէմ, որոնք կը հակադրուին իր շահերուն: Հետեւաբար տրամաբանական է հետեւցնելը, որ Թուրքիա հաշտ աչքով պիտի չդիտէ այս զինեալ խմբաւորումին դէմ առնուած որեւէ քայլ: Մանաւանդ՝ զինուորական: Իսկ Ռուսիա մօտաւորապէս երկու ամիսէ ի վեր իր օդուժը գործի լծած է Տաէշի դէմ, համադրաբար իր տեղական դաշնակիցներուն, առաջին հերթին՝ սուրիական բանակի ցամաքային ուժերուն:

Շաբաթ մը առաջ, Անթալիոյ մէջ կայացած G-20ի ժողովին, Ռուսիոյ նախագահ Վլ. Փութին յայտարարեց, թէ իր ունեցած տեղեկութիւններով Տաէշ 40 պետութիւններէ օժանդակութիւն կը ստանայ, «որոնցմէ ոմանք ալ հոս ներկայ են»: Ռուսիա նաեւ աշխարհին յայտնեց, թէ ինք տեղեակ է սուրիական քարիւղի կողոպուտին միջոցով Տաէշը դրամով պարէնաւորելու



փաստէն: Այս յայտարարութեան յաջորդեց ռուսական օդուծին կողմէ Թուրքիա ուղղուող քարիւղատար բեռնակառքերու ուժակոծումը: Փակագիծ մը բանալով ըսենք, որ ամերիկեան հանրային հեռատեսիլը (PBS) հաղորդեց, թէ ամերիկեան օդուծը ուժակոծած է նոյն այս շարասիւնները եւ ցուցադրեց... ռուսական օդուծին ուժակոծումէն պատկերներ, իբրեւ «փաստ» ամերիկեան այս քայլին...

Մէկ խօսքով:

Թուրքիա գոհ ըլլալու ոչ մէկ պատճառ ունի Սուրիոյ մէջ ռուսական օդուծին կողմէ զինեալ խմբաւորումներուն դէմ առած ազդու եւ գործնական քայլերէն: Ռոպիհետեւ, պարզ է, ռուսական այս հարուածը ուղղուած է Թուրքիոյ խաղաքարտերուն դէմ եւ կը միտի զանոնք չեզոքացնելու ճամբով (ի մէջ այլոց) իր ռազմավարական շահերը ապահովել տարածաշրջանէն ներս:

Սուրիան վերածուած է մէկ կողմէ Ռուսիոյ (եւ իր տեղական դաշնակիցներուն) եւ միւս կողմէ Արեւմուտքի (ներառեալ Թուրքիոյ) ռազմավարական շահերու բախումի թատերաբեմի: Շահերու այս բախումին մէջ շահագործման ենթակայ խաղաքարտեր են կրօնական մոլեռանդութիւնը, համայնքային այլազանութիւնը (իսլամ – քրիստոնէայ, սիւննի – ալաուի, սիւննի – շիա եւ մինչեւ իսկ դասական սիւննիզմի եւ ուսահապականութեան): Արեւմուտքի քարոզչութիւնը երկար ատեն շահագործեց սիւննի – ալաուի համայնքային խաղաքարտը, պնդելով, որ Սուրիան կը կառավարուի ալաուի փոքրամասնութեան կողմէ, մինչ բնակչութեան 70 տոկոսը սիւննի իսլամ է: Նոյն այս քարոզչական միջոցները (բնականաբար) չէին խօսեր այն փաստին մասին, որ Սուրիոյ բնակիչն 70 տոկոսը եւս սիւննի է եւ թէ երկրին վարչակարգը ամբողջութեամբ լայիք է՝ ի հակադրութիւն Ծոցի արաբական շատ մը երկիրներուն, որոնք Արեւմուտքին դաշնակից են:

Այս դրութեան մէջ, մինչ Արեւմուտքը Փարիզի դէպքերէն ետք իրարանցումի մէջ է Տաէշի կապակցութեամբ եւ տրամադրուած՝ ասոր դէմ, անդին սակայն Թուրքիա ջղագար վիճակի մատնուած է ի տես նոյն այդ խմբաւորումին կրած զինուորական հարուածներուն: Ի տես այս փաստին, Արեւմուտքը անելի մատնուած է, թէ ի՞նչ կեցուածք պէտք է որդեգրէ ՆԱԹՕի անդամ Թուրքիոյ նկատմամբ, որ փաստօրէն կրակի հետ կը խաղայ թէ՛ Տաէշը հովանաւորելով եւ թէ ռուսական օդուծին դէմ իր առած զինուորական մագլցողական քայլով:

Մեր այս տեսակէտներուն մէջ, այս կամ այն կողմին նկատմամբ համակրանքի կամ հակակրանքի ոչ մէկ ենթաթեքսթ պէտք է փնտռել, որովհետեւ կը փորձենք միայն չոր իրականութիւնները ցոյց տալ: Հայ ժողովուրդը, Սփիւռքի թէ Հայաստանի մէջ, անհրաժեշտ է որ հաշուի առնէ միայն չոր իրականութիւնները, որպէսզի կարենայ յստակօրէն կշռադատել, թէ ո՞ր կը կայանան Հայաստանի ու հայութեան շահերը:

Մանաւանդ որպէսզի ճիշդ գնահատէ թրքական վտանգը, որ ուղղուած է մեր դէմ:

24 Նոյեմբեր, 2015



vproodian@gmail.com

Ազգային արժանապատուութեան կորո՞ւստ, թե՞ «Գորշ գայլեր»

Ռուզան ԱՍԱՏՐԵԱՆ

09/02/2015 , ԳՐԱԿԱՆ ԹԵՐԹ

Ահաբեկչական գործողութիւններ իրականացնող թուրք ազգայնամոլական այս կազմակերպութեան մասին քիչ է շօշափուել, որովհետեւ տարիներ շարունակ նրանք գործել են գաղտնի, Թուրքիայի և օտար երկրների յատուկ ծառայութիւնների ծրագրերով, մինչև նրանց գործունէութեան ոլորտը չբխուեց խոշոր տերութիւնների շահերի հետ, ինչպիսիք են՝ Կիպրոսի ազատագրութիւնը, քրտական շարժումը, Հայոց ցեղասպանութեան միջազգային ճանաչումը և այլ հարցեր:



Նրանք յատկապէս այն երկրներում են բոյն դրել, որոնց քաղաքական լծակները մեծ ազդեցութիւն ունեն միջազգային ասպարէզում, ինչպէս, օրինակ՝ ԱՄՆ-ն, Անգլիան, Հոլանտիան, Գերմանիան, էլ չեն խօսում Ատրպէյճան կոչուած երկրում: Այդ կազմակերպութեան մէջ ընդգրկուած են գիտնականներ, պատմաբաններ, տարբեր մասնագիտութեան տէր մարդիկ ու նաեւ յանցագործներ, որոնք ազգայնամոլական գաղափարների ֆանատներ են: Նրանցից մէկին՝ 1915 թ. թուրքական 4-րդ բանակի հրամանատար, Արեւմտեան Հայաստանի և Կիլիկիայի հայկական ջարդերի մասնակից, Ուրֆայի հայութեանը արեան ծովի մէջ խեղդող ճեմալի թոռանը՝ Հասան Ճեմալին, վերջերս հանդիպեցինք, ոչ աւել, ոչ պակաս, ԵՊՀ-ում, «Միվիլիթաս»-ի «Հրանդ Տինք» հիմնադրամի հրաւերով: Նրբօրէն մշակուած նրա այցի նպատակը ոչ թէ պապի արածների համար ներողութիւն խնդրելն էր կամ իր գրքի բովանդակութեան մեկնաբանութիւնը, այլ 1,5 միլիոն հայերի կոտորածների մասնակից մի հրէշաւոր չարագործի՝ հայ վրիժառունների՝ ԱՍԱԼԱՅԻ կողմից վրէժխնդիր լինելու փաստը ահաբեկչութիւն կոչելը, Սեւրի ու Ղարսի պայմանագրերը չեղեալ յայտարարելը և համոզուելու նաեւ՝ հայ երիտասարդութիւնը Ցեղասպանութեան ճանաչո՞ւմ է ուզում, թե՞ պահանջատիրական իրաւունքներ ունի: Ինչեւէ, ես նամակ գրեցի Ռաքել Տինքին, խնդրելով հրաժարուել հիմնադրամի նախագահի պաշտօնից, սակայն եղածն եղած էր, և սրանով գոնէ կանխուեցին յաջորդ այցերը: Մեր անհորիզոն ներողամտութիւնը, որ ականատեսն է ներկայ օրերի «ֆութպոլային ծրագրին», ցիրիխեան ու ատրպէյճանական ամէնօրեայ սադրանքներին, ապրիլի 24-ը Գալիպոլի ճակատամարտով քողարկելու թուրքական նոր ու խորամանկ հնարքներին, դարձեալ կախուել է ճակատագրի փէշից՝ հզօր ազգային բռունցք դառնալու փոխարէն: Զարմանալի է...

«Գորշ գայլերը» Թուրքիայի միտքն են ու ձեռքերը՝ պանթուրքիզմի ծրագիրը անխափան իրականացնելու ճանապարհին: 1813 թ. ծնուած այդ հակամարդկային ծրագիրը



Արեւմտեան Հայաստանում ծնեց 1894-1896 թթ. սուլթանհամիդեան ջարդերը, վերջինս, որպէս վիժուածք՝ ժառանգութիւն թողեց երիտթուրքերին, որոնք իրականացրին հայոց ջարդերը, սրանց հետագայ գործողութիւնները վերարտադրեցին «Գորշ գայլերին»... Նրանց արնախում գործունէութեան ձեռագրերը դեռ երկար կը մնան չբացայայտուած, բայց այն, ինչ կայ, միանգամայն բաւարար է այդ ահաբեկչական կազմակերպութիւնը էնվերների, թալեաթների ու ձեւալների ժառանգորդներ համարելու համար: 1975 թ. փետրվարի 24-ին Կիպրոսում լոյս տեսնող «Բօզկիւրտ» թերթը խմբագրականում գրել է. «Նոր դաս կը տրուի հայերին, եթէ շարունակեն յիշեցնել իրենց հայրերի ու պապերի կոտորածների մասին»:

Դիւանագիտութեան մէջ չափազանց ճկուն յարաբերութիւններով ընթացող Թուրքիան, օգտուելով ՄԱԿ-ի կոնվենցիաներում բացակայ հայրենագրկութեան մասին կարեւոր որոշումից, իր երկրի խնդիրները կապեց էթնիկ գտումների հետ, որի առաջին զոհերը հայերն էին: Մինչէւ օրս շարունակուող թուրքական վանդալիզմը իրականացնելիս՝ Արցախեան ազատագրական շարժման դէմ վարձու մարդասպաններ հանելը, Միջագետքի հայկական գաղութներում՝ Քեսապում, Հալէպում, անգամ Տէր Զօրում հայկական հետքերը վերացնելը իրականացրին «Գորշ գայլերի» ակտիվ միջամտութիւններով: Դեռ վերջերս Շուէյցարիայում նրանց ակտիվ ներկայացուցիչ, թուրք ազգայնամոլ Դոքու Փերենչէքը Հայոց ցեղասպանութեան փաստը ժխտելու համար դատապարտուեց ազատագրկման: Այս անլեզալ կազմակերպութիւնը իրականացնում է իր երկրի քաղաքականութիւնը: Հրանդ Տինքի սպանութիւնը նրանց համար առիթ էր Թուրքիայի ներսում նոր հայկական հարց առաջացնելու: Պատահական չէր, որ Թաքսիմի հրապարակի դէպքերը փորձ էր արւում կապել հայերի հետ, ինչը ջաջողուեց: Քրտական հարց չկայ Թուրքիայում, կայ միայն Հայկական հարց – սա է վերջին տարիների նրանց կարգախօսը: Ինչպէս 1915 թ., այնպէս էլ 1993-ին, փորձելով կրկին քրտերին հայերի դէմ լարել, «Գորշ գայլերը» յայտարարեցին, որ ՌԿԿ-ի ղեկավար Օջալանը հայ է, և հայեր են նրանց բոլոր ղեկավարները: «Գորշ գայլերի» պարագլուխներից մէկը՝ Թալեաթի աներորդի Իսմէթ Ինօնիւն, որ 1943 թ. Թալեաթի աճիւնը տեղափոխեց Թուրքիա, 1924 թ. թուրքական թերթերից մէկում յայտարարել է, որ ինքը երեք ամսում աւելին է արել հայերին բնաջնջելու համար, քան Սուլթան Համիդը՝ 30 տարում: Ահա նրանք, Հասան Ճեմալի կողմից արժանացածները, որոնց արիւնալի գործողութիւնները մարդկութեան կողմից ճշմարտութիւնը վերարտադրող հայելիների աղերսներ ունեն: «Գորշ գայլերի» ղեկավար Բաշբուղ Թիրքէշը, շարունակելով Թալեաթի ազգայնամոլական քաղաքականութիւնը, շատ հետաքրքիր միտք է արտայայտել. «Կարելի է գրաւել մի ազգի բազում ամրոցներ, բերդեր, բազմիցս պարտութեան մատնել նրա բանակին, բայց այնքան ժամանակ, քանի դեռ նրա սիրտն ու հոգին չես գրաւել, այդ ազգը չես նուաճել»: Եւ պատահական չէ, որ Թուրքիա աշխատանքի մեկնած մեր հայրենակիցները երբեմն շփոթուած էին թուրքերի «քծնախառը» վերաբերմունքից: «Գորշ գայլերի» մոլի գաղափարախօսներից մէկը՝ Նիհալ Աթսըզը պահանջում էր թուրքական ռասսան մաքրել այլ ազգերից՝ հայերից, չերքէզներից, ալբանացիներից... Նոյն Իսմէթ Ինօնիւն 1925 թ. «Թուրքական օջախների» համագումարում յայտարարել է, որ անհրաժեշտ է թրքացնել բոլոր նրանց, ովքեր ապրում են Թուրքիայի տարածքում: Դէ ինչ, Տերսիմի ու Մուշի, Վանի ու Տիարպէքիի տարածքներում ապրող թաքնուած հայերը գրեթէ մոռացել են իրենց ազգային լեզուն. մի թէ սա ազգային ողբերգութիւն չէ:



Աշխարհի հնագոյն ու քաղաքակիրթ ազգերից մէկը լինելով, արտաքին ու ներքին թշնամիների ամենօրեայ սադրանքների պատճառով օտարանալով մեր արարչական բնօրրանից, դարձել ենք ամերիկահայ, ֆրանսահայ, գանատահայ, թուրքահայ... Թէ շատերին ո՛ր կը հասցնի երկրիս ներկայի հայաթափութիւնը՝ դժուար է ասել...

Գիւմրու ծանր ողբերգութիւնը, խաղաղ ընտանիքին սաֆարովեան ձեռագրով սպանդի ենթարկելը ցնցեց ոչ միայն մեզ, այլև խղճի պակաս չունեցող օտարներին: Հասկացա՞նք արդեօք, որ սեփական հողի վրայ անգամ խաթարուած է մեր խաղաղութիւնը, և եթէ կարապի ու խեցգետնի նման Հայրենիքը աջ ու ահեակ ենք քաշում, մեր ներսի ու դրսի թշնամիներն են միայն օգտուում դրանից: Չեմ ուզում պարտադրել որեւէ մէկին, սակայն ուսումնասիրելով «Գորշ գայլերի» արիւնախում գործողութիւնները, մտովի սահմոկեցուցիչ դէպքը թուրքական ձեռագրի նմանեցրի՝ ով էլ որ գործած լինի այդ յանցանքը... Շատերս զարմացանք Մաշտոցի պողոտայում յայտնուած «Գորշ գայլերի» խորհրդանիշը համարուող՝ լուսնի վրայ ոռնացող գայլը տեսնելիս... Գաղտնիք չէ, որ Հայաստանում այսօր 4000-ի հասնող հասարակական կազմակերպութիւն կայ: Մշակութային, կրօնական, սոցիալական, իրաւական ոլորտների անուան տակ քողարկուած, նրանք ումի՞ց և ինչպիսի՞ գրանտներ են ստանում և ի՞նչ են անում, երբ արտագաղթն ու աղքատութիւնը, բարոյագրկութիւնն ու կոռուպցիան իւեղողում են մեզ. այդպէս էլ անհասկանալի է մնում գրանտակեր օտարածիւնների մուտքը մեր հայահալած փոքրիկ աշխարհ: Ամռանը թերթերը գրեցին՝ «Գորշ գայլերն» ազատ շրջում են Երեւանով»: Յօդուածը չվրիպեց իմ ուշադրութիւնից. նրանք հենց այնպէս, այն էլ Եղեռնի տարելիցին, չէին յայտնուի Երեւանում: Ու չերեւաց, թէ որեւէ մէկը բանի տեղ էր դրել այդ ինֆորմացիան, սակայն եկողն իր գործն արեց ու գնաց, ահաբեկչութիւնները մէկ օրում չեն նախապատրաստուում...

Յայտնի դարձաւ, որ Հայաստանում գործող Եւրոպական ինտեգրացիա հ/կ-ի ուժերով, 100-ամեայ տարելիցին ընդառաջ, պրոթուրքական գիրք է տպագրուել, որի հեղինակը Անգլիայի թագուհու խորհրդական Ճեֆրի Ռոպերթսոնն է: Արքայական հովանավորութեամբ տպագրուող այդ գրքի նպատակը՝ թուրքը, որ փրկել է ինձ, նշանաբանն է, խորքում՝ թուրքերի նկատմամբ սեր արթնացնելը: Եթէ թագուհու խորհրդականին թուում է՝ մենք գլխի չենք ընկնում, չարաչար սխալուում է: Թուրքերը եթէ սրախողխող չեն արել, ապա միայն մանկամարդ հայ աղջիկներին, որոնց կնութեան են վերցրել, փոխելու համար իրենց արատաւոր ժառանգական յատկանիշները: Ճեֆրին թող գենետիկ ուսումնասիրութիւն սկսի. նրանց 80 տոկոսը, համոզուած եմ, հայ է, թէև Սուլթան Համիդի կողմից կազմակերպուած առաջին խոշոր ջարդերի ժամանակ 6000 թրքացած հայ մանուկների սերնդի «թուրք» ժառանգներն այսօր, ինչպէս Էրտողանն ու Գիւլը, աւելի թուրք են...

Եւ այս գայլերի երախում բռունցքուելու, համահայկական դաշինք ստեղծելու փոխարէն կարծես մեր դէմ ենք աշխատում՝ մեր անհորիզոն բարութեան մէջ տեսնելով մեր պաշտպանուածութիւնը: Ազգերի հետ բարեկամանալու իւրօրինակ սխալ ճանապարհ ենք ընտրել. գոյք՝ պարտքի դիմաց, հողերը՝ չկոտորուելու դիմաց, զոհերը՝ սխալ դիւանագիտութեան դիմաց... Ազգային շահը տեսնելու, սեփական գէնը սեփական հողի վրայ պահելու փոխարէն ընկել ենք սեփական զաւակներին ու սեփական հարստութիւնը



դուրս մղելու յետեւից: «Գորշ գայլերի» սերունդները Հրանդ Տինք են սպանում, մենք նրանց ժառանգներին Հայաստան ենք հրաւիրում մեր սերն ու նուիրուածութիւնը յայտնելու, շքանշաններ տալու համար, քիչ էր մնում՝ ատրպէյճանցի գրողին Հայաստանի քաղաքացիութիւն շնորհէինք, ինչ է, թէ երկու լաւ խօսք էր ասել Հրանդ Մաթեոսեանի մասին: Բնչ է, չասէ՞ր, չպարծենա՞ր, որ նման հանճարը իրեն բարեւել է, հա՛, վերջում էլ խոստովանեց. «Ես փրկել եմ իմ ազգի պատիւը»: Պատուասէր հայերս ինչն՞ է ենք այսքան խեղճացել: Ազգային արժանապատուութեան կորուստը յիշողութեան կորուստ է: 1975 թ. մի խումբ երիտասարդներ որոշեցին աշխարհի ուշադրութիւնը հրաւիրել մի մոռացուած պատմութեան՝ Հայոց մեծ եղեռնի միջազգային ճանաչման խնդրին: Նրանք, որ իրենց կոչել էին Հայաստանի Ազատագրութեան Հայ Գաղտնի Բանակ, հետագայում ստացան ԱՍԱԼԱ անունը և պատմության մէջ մնացին որպէս Հայոց ցեղասպանութեան ճանաչման և հայրենագրկումի առաջին մահապարտներ: Սկզբում նրանց փորձեցին որակել ահաբեկիչներ, սակայն 1,5 միլիոն հայերի ողբերգութեանը չկարողացան դիմադրել անգամ օտար դատարանները: Ազգային վրեժխնդրութիւնը, ինչպիսի անուն էլ որ տանք, այդ ազգի գոյութեան խորհրդանիշն է: Եթէ դա չլինէր, այսօր հայոց սահմանները անխոցելի չէին լինի թշնամու դէմ, և Արցախի ազատագրութեան համար չէր ստեղծուի մահապարտների գումարտակ: Արեւմտեան Հայաստանը բռնազաւթելու և հայրենիք ստեղծելու թուրքական գործօնը այսօր էլ ճիգ ու ջանք չի խնայում պատմութեան էջերից մաքրելու իր ցեղի անօրինական բռնազաւթման հետքերը՝ Հայոց մեծ եղեռնը: Այն հսկայական գումարները, որոնք ներդնում է ցեղասպանութիւնը միջազգայնօրէն չճանաչելու համար, յայտնի է ոչ միայն մեզ, այլև աշխարհի առաջադէմ մարդկութեանը: Լինեն «Գորշ գայլերը» թէ Թուրքիայի նախագահ Էրտողանը, միեւնոյն է, աշխարհասփիւռ հայերն աւելի մեծ փաստ են, քան Թուրքիայի, Անգլիայի ու Գերմանիայի արխիւներում ժամանակի թողուութեանը սպասող Մեծ եղեռնի իրական փաստերը:

Հայերս պէտք է վերանայենք մեր իրաւունքի ռազմավարութիւնը, որովհետեւ թուրք դիւանագետների և նրանց հակահայկական լոբբիստներ իրականացնող արնախում գայլերի փոխարէն մենք պէտք է գործենք միջազգային իրաւունքների դաշտում, ապացուցելով, որ մոլորակի վրայ ամենամեծ էթնիկ գտումը իր պատմական տարածքներում իրականացուել է հայ ժողովրդի հետ:

Այո՛, Թուրքիան իր շողմ քծնանքով կաշառելով, քաղաքական տարբեր զիջումների գնալով, երբեմն դիւանագիտական կապերը խզելու սպառնալիքով որոշ տէրութիւնների ստիպում է հրաժարուել Հայոց ցեղասպանութիւնը ճանաչելուց, ինչպէս վերջերս արուեց Աւստրալիայի հետ: Աշխարհը միշտ էլ ընդունել է ուժն ու հզօրութիւնը. իրականութիւնն ու յաւերժութիւնը իրարից չտարբերող պետութիւնն ու ազգերը, միեւնոյն է, պատասխան են տալու ժամանակի առաջ:

Յ.Գ. Արցախեան ազատագրական պայքարի ոգին ապացուցեց, որ հայերն իրենց համախմբուածութեան շնորհիւ հզօր են և անկոտրում: Պահպանենք մեր ազգային, պետական մտածողութեան և համամարդկային դիւանագիտութեան բանալին, որ շնորհեց մեզ Արցախեան մեծ յաղթանակը՝ մեզ վերադարձնելով հայի Ոգին:



ԱԿՆԹԱՐԹՆԵՐ

Մարդիկ, մարդիկ....մերթ կը հիացնեն ու կը լիացնեն, կը ներշնչեն ու կը ոգեշնչեն զիս, կը ջերմացնեն ու կը յուսադրեն զիս....մերթ ալ կը զարմացնեն ու կը հիասթափեցնեն, կը հաւատազրկեն ու կը յուսազրկեն զիս....մինչեւ անգամ կը ցնցեն ու ապշահար կը թողուն զիս....Ի՛նչ որ ալ պատահի, սակայն, մարդը մարդով միայն կրնայ ապրիլ, իմաստաւորել ու արժեւորել իր կեանքը....Սա մարդ էակին ճակատագիրն իսկ է....Միայն թէ մարդը ՄԱՐԴ մնայ...իր բոլոր արատներով ու թերութիւններով անգամ.....

.....

Այն մարդը որ գիտէ սիրել ծաղիկներն ու գարունը, արբենալ բնութեան գեղեցկութեամբ, անոր հրապոյրներով սքանչանալ.... կրնա՞յ իր մէջ երբեւէ կրել չարութեան սերմեր....Բայց բնութեան մէջ ալ, ամենէն գեղեցիկ ծաղիկին քովն ի վեր կ'աճի մոլախոտը, որ կը փորձէ կարծէք խեղդել չքնաղ ծաղիկը....Բարին ու չարը քով-քովի կ'ապրին ամէն տեղ, նոյնիսկ՝ մէկ եւ միեւնոյն մարդուն մէջ...եւ որքա՛ն ճիգ ի գործ պիտի դրուի, արմատախիլ ընելու չարը, որպէսզի բարին կարենայ ծաղկիլ իր ամբողջ վեհութեամբ, ազնուութեամբ, շքեղութեամբ....Սա երեւի մարդուն ամենօրեայ պայքարն է, որ վերջ չունի....իր կեանքի խորագոյն իմաստը...

.....

Միտքերու շփոթ, լուրերու շփոթ, բարեկամ-թշնամիի շփոթ, արժէք-չարժէքի շփոթ....Աշխարհի կառավարման կետերը տակաւ կը հասնին իրենց նպատակին՝ բացարձակ աշխարհատիրութիւն հաստատել «ստրուկներու» վրայ, որոնք իրենց կողմնորոշումը կորսնցուցած ըլլալով, պիտի տատանուին աջ ու ձախ, պիտի կորսնցնեն սեփական դատողութիւնը, իրերն ու երեւոյթները կշռադատելու իրենց կարողութիւնը եւ պիտի դառնան տեսակ մը խամաճիկներ՝ հզօրներու ձեռքին տակ....Գերմշակուած վայրենացման, հակամարդկայնութեան մեր ժամանակներուն, մարդ էակը, ազգը այսքան չէին ստրկացած, իրենց արժանապատուութիւնը այսքան չէր եղած ոտքի կոխան, իրենց այսօրուան եւ վաղուան կեանքը այսքան անկանխագուշակելի չէր եղած, այսքան չէին ստորնացած անոնք....Համայն մարդկութեան ոգիի եւ գիտակցութեան զարթօնք է պետք....օդի, ջուրի, հացի նման:

.....

Անկեղծ խօսքն ու զրոյցը, ինքնաքննադատութիւնը, ինքնախոստովանանքը, մանաւանդ հրապարակայինը, մեծ քաջութիւն կ'ենթադրեն, հոգիի խիզախութիւն, մեր սխալներուն



շեշտակի նայելու համարձակութիւն....ինչ որ կարելի կը դարձնէ այդ սխալներուն սրբագրումը, առանց ինքնախաբէութեան, անոնց պատասխանատուութիւնը շալկելու պատրաստակամութեամբ...: Նման մտայնութեամբ եւ մօտեցումով միայն, ազգերը կրնան մեծ ընծայուիլ....

.....

Այնքա՛ն պատնէշներ կան մեր մտքին մէջ, որոնք կ'արգելակեն ազատ մտածողութիւնը....անոնք դարե-դար կուտակուած նախապաշարումներն են, քարացած կարծրատիպերը, կամ այն ուղեղալուացումները, որոնց ենթակայ ենք օրն ի բուն, որոնք մեզի ուղղակի թէ անուղղակի կը պարտադրեն՝ որոշ ձեւով մտածել, որոշ ձեւով զգալ, որոշ կերպով աշխարհը ընկալել....Մեր մտքի ազատութիւնը նուաճած պիտի ըլլայինք, եթէ կարենայինք չկաղապարուիլ որեւէ բանով եւ՝ բաց միտքով ընկալել ու մտածել....

.....

Մարդ էակը....Ո՞վ կրնայ լռիւ ըմբռնել զայն....մերթ այնքա՛ն բարի է ու վեհ, ջերմսիրտ ու ազնիւ, մերթ ալ կը դառնայ քարսիրտ ու անգութ , չար եւ փոքրոզի....Մերթ կը բարձրանայ ոզեղէն թռիչքով, մերթ ալ կ'իյնայ վար տիղմի ու ցեխի մէջ....Բարին ու չարը կարծէք շարունակ պայքար կը մղեն իր ես-ին մէջ, ուր յաղթական կը դառնայ մէկը կամ միւսը....Բայց ինչպէ՞ս կը պատահի, որ ոմանք, հագուագիւտ անձինք, միշտ ալ բարի են ու ազնիւ, ներող ու լայնսիրտ, մինչ ուրիշներ կը մնան բարոյական տիղմին մէջ....

.....

Նիւթը եւ մարդկային խիղճը....Երկու հակոտնեայ բառ-հասկացութիւններ....Նիւթով յղփացած մարդը տակաւ կ'անմարդկայնանայ, կը դառնայ անտարբեր այլոց ցաւին, տառապանքին, զրկանքին....աւելի՛ն ու աւելի՛ն ունենալու տենդով, մոլուցքով կ'արբենայ ան, եւ այդ մոլուցքին անձնատուր՝ կ'օտարանայ իր սեփական հոգիէն, սիրտէն, խիղճէն....կը գոռոզանայ ալ շատ անգամ, կարծելով որ նիւթական հարստութիւնը զինք կ'ընծայէ բոլորէն վեր, արժանի՝ բոլորին խոնարհամիտ յարգանքին....Այսպէս է որ մարդը կ'այլասերի, կը կորսնցնէ իր հարազատ ինքնութիւնը, ստրուկը դառնալով նիւթին, դրամին, ինչքին....Խորքին մէջ, ինքն է որ կը ստրկանայ եւ կը միտի ստրկացնել ուրիշները....

.....

Հայոց պատմութիւնը ամբողջութիւն մըն է՝ իր խոյանքներով եւ անկումներով, իր լոյսով ու ստուերով, ճիշդով ու սխալով....Պիտի ընկալել զայն ամբողջութեամբ եւ ոչ՝ ընտրովի, ժխտելով առերեսուիլ անոր մութ ծալքերուն հետ, քանզի ամբողջական ինքնաճանաչման



համար, անհրաժեշտ է պարագրկել անոր ամբողջութիւնը՝ կարելի անաչառութեամբ, որպէսզի կարելի ըլլայ ուղղել մեր արատներն ու սխալները, մեր բազում-բազում թերացումներն ու սայթաքումները...Միայն լուսաւոր կէտերը տեսնելով եւ անտեսելով միւսները, մենք միայն ինքնախաբէութեամբ կրնանք տարուիլ եւ երբեք չկարենանք խրատուիլ մեր սխալներէն...

.....

Բախտը չեմ ունեցած ծնելու, մեծնալու հայրենի երկնակամարին տակ, բայց Հայրենիքը միշտ ներկայ է եղած՝ ծնողացու շուրթին, մեր ընտանեկան յարկին տակ, դպրոցէն ներս՝ որպէս անհասանելի երագ, որպէս լուսեղէն փարոս, որպէս գոյութեան նպատակ.....Անվերջ փնտռեր եմ գայն, միտքս ու հոգիս սլացք առեր են դէպի հայրենի եզերքները, երագներուս մէջ յայտնուեր է ան....Անոր գոյութիւնն իսկ, անկախ բոլոր հանգամանքներէն, դարձեր է հոգիի յենարան, հայութեան ու հայկականութեան ամրակոտ ամբոց....Հայրենիքը դարձեր է կարօտ ու երագ մեր մանուկ ու պատանի հոգիներուն.....Առանց հայրենի իրականութեան, հայ մնալը պիտի դառնար վերացական բան տարագիր հայուն համար....

.....

Հայ կեանքին մէջ, հագուագիւտ երեւոյթներ են՝ անկողմնակալ ըլլալը, դէմքերն ու դէպքերը ճիշդ գնահատելը, անաչառօրէն դիտելն ու դատելը....Մենք դեռեւս բանտարկուած կը մնանք մեր նեղ Ես-երուն, մեր խմբակային ու հատուածական մտածելակերպին մէջ, անհանդուրժողութեան, նախանձի, նեղմտութեան եւ շա՛տ ու շա՛տ արատներու նեղ պատեանին մէջ, ինչ որ մեզ կը նսեմացնէ, մեզ կը ստրկացնէ, արգելակելով մեր թոյլքը դէպի լայնարձակ հորիզոնները մտքի, հոգիի եւ ոգիի....

.....

Ամբողջ կեանք մը իմաստաւորողը՝ այն լոյս-ակնթարթներն են, որոնք յանկարծօրէն կու գան, անակնկալ կը յայտնուին, յոյզ կու տան մտքին ու սրտին, սլացք՝ երեւակայութեան, թեւ ու թոյլք՝ հոգիին....Կը կերպարանափոխուինք, կը պայծառակերպուինք, հոգեւոր նոր վերելքներ կը նուաճենք....Կախարդական ակնթարթ, որ հողակայիկ կեանքը կը դարձնէ ոգեղէն ու լուսեղէն....Կեանքի առօրեայ տաղտուկին մէջ, հոգիս այդ լոյս-ակնթարթները կը փնտռէ շարունակ, որոնք կարծէք մարդ էակը կը բարձրացնեն երկրայինին, վսեմին, հոգեւոր ոլորտի անսահմանութիւնը խտացնելով ակնթարթին մէջ....

.....



Մարդկային հոգին ի բնէ ողբերգական է, քանզի ամէն ինչ վերջ մը ունի, ամէն ինչ անցաւոր է, կայ մահը՝ բոլորին համար հաւասարապէս....Միայն այս պարագան մեզ պիտի դարձնէր իրարու նկատմամբ գորովալիր, կարեկիր, սիրալիր, քանի որ մենք ճակատագրակիցներ ենք....Բայց դժբախտաբար, մարդկային նեղ ես-ը, շահամոլութիւնը, նախանձը եւ....մեզ կը տարանջատեն իրարմէ...Հասկցող մարդը միշտ ալ ներող կ'ըլլայ եւ կարեկիր, քանզի ան կը կարենայ փոքրիկ ես-երու ետին տեսնել համայնապատկերը մարդկային գոյութեան, անոր ողբերգականութեան....

.....

Շատ շուտով 2015-ը կը դառնայ անցեալ ժամանակ....մէկ լման տարի սահեցաւ, անցաւ անչա՛փ շուտ, կարծես երէկ էր որ կը դիմաւորէինք զայն...Տարեվերջերը միշտ ալ տարտամ թախիծով կը պատեն հոգիս, որքան ալ տօնական մթնոլորտը ցնծութիւն բաշխէ չորս դին....Մեզի սահմանուած կեանքէն եւս մէկ տարի կը գեղջուի եւ կը դառնայ անցեալ....Կը փորձեմ վերաքաղը ընել այդ մէկ տարուան....Քանի ազգական, ծանօթ-անծանօթ մարդիկ անդարձ հեռացան, ի՛նչ-ի՛նչ պահեր ապրեցայ...մերթ խռովալից ու տազնապահար, մերթ ալ՝ ցնձագին ու տեսլավառ....Կենսափորձս հարստացաւ եւս մէկ տարիով, ինքնաճանաչման եւ աշխարհաճանաչման եւս մէկ պատառիկով...եւ չեմ գիտեր կրցա՞յ քիչ մը աւելի իմաստնանալ..., կրցա՞յ գէթ ումպ մը խմել իմացութեան անձայրածիր ովկիանոսէն ի բերկրութիւն մտքիս ու հոգիիս...Եթէ կրցայ, ապա կրնամ ըսել որ ի գուր չէ անցած կեանքիս մէկ տարուան ժամանակը....

ԵՐԱՆ ԳՈՒՅՈՒՄՃԵԱՆ

ՆՈՅՆՄԲԵՐ-ԴԵԿՏԵՄԲԵՐ 2015